№ 17 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8 — 1905 — ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ — ԵՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8 № 17

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—5 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ **1905** ԹՒԱԿԱՆԻՆ

(33-ՐԴ ՏԱՐԻ)

«ՄՇԱԿԸ» ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ
ամէն օր, բացի տօներին յաջորդող օրերից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 բուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 բ., տասն ամսվանը՝ 9 բ., ինն ամսվանը՝ 8 բ., 8 ամսվանը՝ 7 բուբլի, եօթ և վեց ամսվանը՝ 6 բ., հինգ ամսվանը՝ 5 բ., չորս ամսվանը՝ 4 բ., երեք ամսվանը՝ 3 բ., երկու ամսվանը՝ 2 բ. և մի ամսվանը՝ 1 բուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 բուբլի։

Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ» իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կարևոր բարեփոխութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Սերգիյ Ալէքսանդրովիչ. Պաշտօնական հաղորդագրութիւն Թիֆլիսի բանւորների գործադուլի մասին. Մամուլ. Թատրոն և երաժշտութիւն. Մի կարևոր պահանջի առիթով. Նամակ Կարսի գիւղից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԿԱՐԵՒՈՐ ԲԱՐԵՓՈԽՈՒԹԻՒՆ

Մի կարևոր կարգադրութիւն է արված Վրաստանի էկզարքոսի թեմի ծխական-եկեղեցական դպրոցների վերաբերութեամբ։

«Кавказъ» պաշտօնական լրագիրը հաղորդում է, որ տեղական լեզուին շատ մեծ տեղ է տրված այդ դպրոցներում։

Մինչև այժմ ընթերների դպրոցներում կրօնը աւանդվում էր թէ մայրենի և թէ ռուսերէն լեզուներով։ Դպրոցի երրորդ բաժանմունքում կրօնի դասաւանդութիւնը զուգընթացաբար կատարվում էր երկու լեզուներով, իսկ չորրորդ բաժանմունքում բացառապէս ռուսերէն։ Փորձը ցոյց տուեց, որ երկու լեզուներով դասաւանդութիւնը չափազանց դժուար է և ծանր նոյն իսկ այն կրօնուսոյցի համար, որ գիտէ ռուսերէն լեզուն, և բոլորովին անհնարին է այն քահանաների համար, որոնք չեն խօսում ռուսերէն, իսկ վերջին տեսակ քահանաների թիւը քիչ չէ Վրաստանի թեմում։ Այդ պատճառով շատ դպրոցներում կրօն աւանդում էին ուսուցիչները, իսկ քահանաները իրապէս շատ անգամ հեռու էին մնում դպրոցից։ Ռուսաց Սինոդը, աչքի առաջ ունենալով կեանքի դիտողութիւնները, որոշեց թոյլատրել, որ տեղական դպրոցներում բոլոր չորս տարվայ ընթացքում էլ կրօնի դասաւանդութիւնը կատարվի բացառապէս մայրենի լեզուով։ Բացի այդ այն բոլոր տեղերում, ուր հնարաւոր կը լինի, քահանան կարող է ուսուցանել և մայրենի լեզուն. իսկ որտեղ այդ անկարելի կը լինի՝ առաջվայ պէս նա կը յանձնվի ուսուցիչներին։

Այդ կարգադրութիւնը կարևոր է թէ գործնական տեսակէտով և թէ սկզբունքով։

Եւ արդարև նա վերաբերում է ոչ միայն կրօնի դասաւանդութեան, այլ և երգեցողութեան, որ նոյնպէս պէտք է կատարվի տեղական լեզուով։

Վրաստանի էկզարքի թեմը միջոցներ է ձեռք առնում ներկայումս կազմելու ձեռնարկներ կրօնի դասաւանդութեան համար տեղական լեզուներով։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆ ՄԵԾ ԻՇԽԱՆ ՍԵՐԳԻՅ ԱԼԷՔՍԱՆԴՐՕՎԻՉ

Սպանիչի ռումբին զոհ գնացած Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Սերգիյ Ալէքսանդրովիչը Ալէքսանդր II կայսրի չորրորդ որդին էր։ Նա ծնվել էր 1857 թ. ապրիլի 29-ին։ Նորին Բարձրութիւնը զինուորական ծառայութեան բոլոր աստիճաններով արագ անցկացաւ 1882 թ.-ից մինչև 1881 թ.-ականը։ 1891-ին Մեծ Իշխանը նշանակվեց Մոսկվայի գեներալ-նահանգապետի նշանաւոր պաշտօնին։ 1896-ին տեղի ունեցաւ Բարձրագոյն հրովարտակ, որով Մեծ Իշխանը նշանակվում էր Մոսկվայի զինուորական շրջանի ընդհանուր հրամանատար և միաժամանակ միացնում էր դրա հետ և գեներալ-նահանգապետի պաշտօնը։ Միայն սրանից մի քիչ ժամանակ առաջ ոչնչացվեց Մոսկվայի գեներալ-նահանգապետութիւնը և Նորին Բարձրութիւնը մնաց միայն Մոսկվայի զինուորական շրջանի ընդհանուր հրամանատար։

1877-ի ռուս-թիւրքական պատերազմում մասնակցելով, հանգուցեալ Մեծ Իշխանը արժանացել էր, իր արած ծառայութեան համար, ս. Գէորգի IV աստիճանին։ Բացի դրանից հանգուցեալ Մեծ Իշխանը ունէր բազմաթիւ ուրիշ բարձր շքանշաններ։

1884 թ.-ին Նորին Բարձրութիւնը ամուսնացաւ Հէսսէի մեծ դուքս Լիւդովիկոս IV-ի դուստր Ելիսավէտա Ֆեոդորովնայի հետ։

1881 թ.-ին Մեծ Իշխանը, մի քանի Օգոստափառ Մեծ Իշխանների հետ միասին գնաց ճանապարհորդելու Եւրոպայում և Պալէստինում։ Այդ ուղևորութեան արդիւնքն այն եղաւ, որ Մեծ Իշխանի նախագահութեամբ կազմվեց «Պալէստինի պրաւօսլաւնի ընկերութիւնը», որի նպատակն է հաւաքել, մշակել և տարածել Ռուսաստանում Աբեղի սրբատեղերի մասին տեղեկութիւններ, ցոյց տալ ուխտաւորներին օժանդակութիւն, հիմնել Պալէստինում հիւանդանոցներ, դպրոցներ, հիւրընկալ տներ և այլն։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍԻ ԲԱՆԻՈՐՆԵՐԻ ԳՈՐԾԱԴՈՒԼԻ ՄԱՍԻՆ

Թիֆլիսի բանւորների գործադուլը վերջացաւ յունվարի 27-ին և նոյն օրը գարեջրի, կօնֆէտի, օղիի և փայտ կտրելու գործարաններում բանւորները վերսկսեցին աշխատանքները, վերսկսեցին նաև էլէքտրական կայարանի բոլոր բանւորները։ Ծխախոտի գործարաններում բանւորների մի մասն սկսեց աշխատել, նոյն վիճակում վերսկսեցին նաև կազմարաններն ու վրաց տպարանը։ Դեռ չէին վերսկսված աշխատանքները մեխանիքական գործարաններում, Ադելխանեանի գործարանում, կաշի գործարաններում, սապոնի գործարանների մի մասում և բոլոր մասնաւոր տպարաններում, բացի մէկից։ Յունվարի 28-ի առաւօտեան աշխատանքներն սկսվեցին կօնդիտէրների մօտ և բուլօչնիներում, նոյնպէս և «Միր» ծխախոտի գործարանում. միւս ծխախոտագործարաններում էլ բանւորների թիւն աւելացաւ։ Յունվարի 29-ի առաւօտեան սպանդանոցում վերսկսեցին աշխատել, երկու ձիաքարշների բոլոր բանւորները գնացին գործի, բոլոր մասնաւոր տպարանները, երկաթագործական արհեստանոցները և այլն նորից սկսեցին աշխատանքները։ Երկաթուղու արհեստանոցներում աշխատում էին 320-ից աւելի բանւորներ. տպարանքներ բեռնաւորելու դէպքում աշխատում էին բոլոր բանւորները։ Երկուշաբթի, յունվարի 31-ին, գործերը վերսկսվեցին բոլոր տպարաններում, բոլոր ծխախոտագործարաններում աշխատում էին արդէն բոլոր բանւորները, որոնք սկսեցին աշխատել նախկին պայմաններով։ Այդ օրը դեռ չէին աշխատում մեխանիքական գործարանները, Ադելխանեանի, Զարգարեանի, Յարութիւնեանի, Ալիխանովի և Տօլլէի գործարաններում։ Նորից գործադուլ արին քաղաքային սպանդանոցի բանւորները։

Փետրվարի 1-ին, համարեա երկու շաբաթ դադարելուց յետոյ, տեղական լրագիրները նորից լոյս տեսան,

Յունվարի 30-ին, Կուկիայի գերեզմանատանը տեղի ունեցած օրհորդ Նինա Գօգիաշվիլիի թաղման ժամանակ, դագաղը շրջապատած ամբոխից մի անյայտ մարդ դուրս եկաւ և վրացերէն լեզուով մի հակակառավարչական ճառ արտասանեց, գովաբանելով հանգուցեալ օրիորդին իբր իր ընկերների փրկութեան համար աշխատող մշակի։ Ճառը վերջացնելով, այդ անյայտ մարդը ծածկվեց ամբոխի մէջ։

Որովհետև մօտ 2,000 հոգուց բաղկացած ամբոխը թաղումից յետոյ մնում էր դեռ գերեզմանի շուրջը և «ուրա» բղաւում, ոստիկանութիւնը պահանջեց, որ իսկոյն ցրվեն։ Իբր պատասխան այդ պահանջի, ամբոխը ոստիկանների գլխին տեղացրեց քարէ կարկուտ։ Մի քար կպչում է կազակի և վայր գլորում ձիուց. լսվում են և զէնքի պայթիւններ։

Դրանից յետոյ ոստիկանութիւնն ու կազակները ցրում են ամբոխը. ձերբակալվում են 6 հոգի։

Ագիտատորները, ինչպէս երևում է, աշխատում էին օգտվել թաղումից ամբոխին մոլորութեան մէջ նետելով, որ իբր թէ Նինա Գօգիաշվիլին տուժել է ընկերների համար և նոյն իսկ սպանվել է յունվարի 23-ի ցոյցի ժամանակ Գոլովինսկի պրոսպէկտում. բայց կատարված քննութիւնները հաստատում են, որ հանգուցեալը մեռել է թոքախտից, որ մօտ 5 տարի էր չէր թողնում նրան տնից դուրս գալ։

Յունվարի 26-ին Քութայիսի գաւառի Դիդի-Չիխայիշի գիւղում, շուկայում եղած գիւղացիները, որոնց թւում կար և գիւղական դպրոցի մի աշակերտ, փորձեցին հակակառավարչական ցոյց սարքել։ Տեղական կառավարութեան կարգադրութիւնով՝ այդտեղ ուղարկվեց 5 կազակից բաղկացած մի խումբ և մի ուրեադնիկ։ Առաջարկվեց ամբոխին, որ ցրվեն և անկարգութիւնները դադարեցնեն, բայց ամբոխը կրակ արեց և վրա տուեց կազակներին՝ զէնքերը խլելու։ Այդ ժամանակ ինքնապաշտպանութեան և անկարգութիւնները դադարեցնելու նպատակով՝ խումբը 8 անգամ կրակ արեց, որից մեռաւ գիւղացի Վաշակիձէն և վիրաւորվեցին մի քանի մարդ, որոնց թիւն անյայտ է։ Դրանից յետոյ կարգը վերականգնվեց։ (Кавказъ)

ՄԱՄՈՒԼ

Վիեննայի «Հանդէս Ամսօրեայ» ամսագիրը իր վերջին համարում բերում է հետաքրքրական տեղեկութիւններ թէ ինչ դրութեան մէջ է այժմ հայերէնագիտութիւնը Եւրոպայում։ Խմբագրութիւնը դիմումներ է արել բոլոր ծանօթ հայերէնագէտներին և իր ստացած պատասխաններից կազմել է մի պատկեր, որի համառօտութիւնը աւելորդ չենք համարում հաղորդել մեր ընթերցողներին։

Usrwapburg։ Պրոֆէսօր Հիւբշման։ «Կերեւայ թէ այժմեան հայերէնի հետազօտները՝ մէտ են աւելի պ. Հիւբշմանի միայն գրաւոր վաստակներէն օգտվելու բաւականանալու. վասն զի դոկտ. Կարստ՝ իր վերջին աշակերտին ընթացքն առաւարտելէն ի վեր, մեծանուն հայերէնագէտը հայերենի դասաւանդութիւնը դադրեցուցած է—առ ի չգոյէ հայերենի հետամուտ աշակերտի»։

Բերլին։ Դոկտոր Ֆինկ։ «Համալսարանին մէջ, բատ դոկտ. Ֆինկի, հայերէնը հաւեստ դիրք ու դեր ունի։ Դոկտ. Ֆինկ հայերէնի հետամուտ միայն երեք հոգի ունի իբրև աշակերտ, որոնք հազիւ անցեալ կիսամեակին սկսեր են հայերէն լեզուն սորվելու, առանց նախաւոր ծանօթութեան. և կիսամեակին վերջերն արդէն ի վիճակի են եղեր Մովսէս Խորենացւոյ պատմութիւնն իբրև ընթերցուածոյ գիրք կարդալու և թարգմանելու։ Երեքն ալ շատ յառաջադէմ են։ Դոկտ. Ֆինկ յոյս կուտայ, որ հայերէնի ուսումը՝ Բերլինի համալսարանին մէջ շատ պիտի ծաղկի։—Իսկ՞ թէ»։

Հայդելբերգ։ Դոկտ. Բ. Խալաթեան։ «Համալսարանին մէջ երեք հոգւոյ հայերէն լեզուն կաւանդէ, որոնք են՝ Dr. Th. Oesterreicher, ժողովրդապետ ի Հայդելբերգ, աստուածաբան և քաջ սեժագէտ. հայերէնը՝ որ նոր սկսած է սորվիլ դոկտ. Խալաթեանցի քով, Ս. Գրոց քննական ուսումնասիրութեան համար է։ Մի և նոյն նպատակաւ կը սորվի հայերէն լեզուն նաև Iohannes Graf, երիտասարդ աստուածաբանութեան ուսանողը։ Երրորդն է Eduard Prokosch, երիտասարդ մագիստրոս Չիկագոյի համալսարանին, հմուտ հնդեւրոպագէտ և բուն բանասէր»։

Ofuborդ։ Պրոֆէսօր Կոնիբէր։ «Ցաւ կը յայտնէ, որ ինքը հայերէն լեզուն չի սորվեցներ մէկուն, սակայն և այնպէս կրսէ, մեր երկու համալսարանին մէջ կան քանի մը նշանաւոր անձնաւորութիւններ, որոնք հայերէնագէտներ են։... Այսպիսով՝ կը յաւելու պրոֆ. Կոնիբէր, թէպէտ հայագէտներն Անգղիոյ մէջ թւով սակաւոր են, սակայն համբաւով՝ նշանաւոր»։

Ֆրայբուրգ։ Պրոֆէսօր Սիմոն Վէբէր։ «Կիսացնէ միանգամայն թէ ուսանող մը բաղձանք յայտնած ու ծանուցած է առաջիկայ կիսամեակին հայերէն սորվելու։»

Լեմբերգ։ Համալսարանին հայերէնի դասատուն լեհահայ վարդապետ մըն է—Դաւիդովիչ. դեռ նոր՝ անցեալ կիսամեակին սկսեր է հայերէնի դասախօսութիւնները»։ Ունկնդիրներն են երեք լեհահայ կղերացուներ և չորս օտարազգիներ։

Բուդապեստ։ «Արդէն հինգերորդ տարին է, որ գիտութեանց համալսարանին մէջ հայերէնի ուսումը կաւանդուի և այս ուսուցանելու կաթեդրան յանձնուած է Եղիսաբէթուպոլսեցի՝ հայազգի Ղուկաս Բաղրուպանեան ազնուատոհմ ուսուցչապետին»։ Ունի 10 ունկընդիր։ «Ամէնն ալ օտարազգի են, մեծ դիւրութեամբ ու սիրով կը սորվին հայերէն լեզուն և անոր ուսումնասիրութիւնը «շատ սիրուն» կը գտնեն եղեր՝ քան թէ ուրիշ լեզուներու։ Իսկ ընդհակառակն՝ մի և նոյն համալսարանին հայազգի բազմաթիւ ուսանողները՝ որոնք ամենն ալ մեծաառաքօս են, իրենց մայրենի նախնական լեզուով ամենևին չեն հետաքրքրուիր.—հայ գաղթականութեան մէջ նշանաւորված ծանօթ, դժբախտ երևոյթ մը։ Ուսուցչապետը միայն օտար ունկնդիրներ ունենալու պատճառաւ՝ դառնացած սրտով կը գրէ հետեւեալ ոտանաւորը.

Հայոց լեզուն
Մեծ ցաւունի քաղաք Անի,
Հին ատենը շատ անուանի,

Իրեն որդիք մունջ են արդէն,
Հեռացել են Հայրենիքէն։
Զեն սիրեր, ո՛հ, ըզհին լեզուն,
Որ սիրուն է օտարներուն
Քառք հայոց ալ է մոռցուած...
Օգնէ՛ մեզի, ով Տէր Աստուած։

«Հայագիտութիւնն Իտալիոյ գրեթէ բան մը չի պարտեր. ըստ այսմ՝ ամենեին ակնկալութիւն չունէինք իտալական համալսարաններէն, բացի Պադուայի համալսարանէն, ուր հայագէտ մը կայ—պրոֆէսոր Տեղա։ Սակայն հոն ալ դժբախտաբար հայկական և ընդհանրապէս արևելեան ուսմամբ զբաղիլ ուզող չը կայ»։

Պարիզ, Պրոֆէսոր Մէյէ։ Ունի երեք աշակերտ։ Ընդհանրապէս Գաղղիոյ մէջ հայերէնով հետաքրքրուող քիչ հոգի կայ։

Վիեննա։ Պրոֆէսոր Բիտնէր։ Ունի հայերէնի ուսանողներ։

Բացի յիշատակած տեղերից, ինչպէս յայտնի է, Պետերբուրգի համալսարանում և Մոսկվայի Լազարեան ճեմարանում ու համալսարանում նոյնպէս կան հայերէնագիտութեան կաթեդրաներ։ Բայց սրանց մասին «Հանդէս Ամսօրեան», ինչպէս երևում է, տեղեկութիւններ չէ ստացել։

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

I

Թիֆլիսի արքունական թատրօնում փետրվարի 5 ին ներկայացում տեղի չունեցաւ Մեծ Իշխան Սերգեյ Ալէքսանդրովիչի մահվան պատճառով։

Հետևեալ օրը, կիրակի, փետրվարի 6 ին, երգչուհի Պապայեանի մասնակցութեամբ տրվեցին «Եօլանտա» և «Գիւղական Պատիւ» օպերաները։ Ներկայացումը գրաւել էր մեծ բազմութիւն։

Մեզ խնդրում են յայտնել, որ արքունական թատրօնում, փետրվարի 18 ին, տեղի կունենայ մի օպերային ներկայացում Թիֆլիսի այգեգործական դպրոցի օգտին։ Կը տրվի Ռուբինշտէյնի յայտնի «Նէրօն» օպերան, Դոնսկոյի մասնակցութեամբ։ Դպրոցի վարչութիւնը յոյս ունի, որ հասարակութիւնը իր ներկայութեամբ բացի այն, որ կը ստանայ գեղարուեստական վայելչութիւն, կը նպաստէ դպրոցի նիւթականին իսկ հետևողապէս և աշակերտների վիճակի բարւոքման։

II

Հաուպտմանի «Մէնակներ» (Одинокіе) դրամա, որ տրվեց կիրակի, փետրվարի 6 ին, Թիֆլիսի ռուսաց բեմի վրա, այն պիեսներից մէկն է, որ մեծ աջողութեամբ կատարում է Մէյերհոլդի դերասանական խումբը։

Մենք առիթ ենք ունեցել տեսնել Հաուպտմանի դրամայի կատարումը երեք դերասանական խմբերի կողմից և պէտք է դրականապէս յայտնենք, որ Մէյերհոլդի խումբը այդ պիեսը շատ աջող, բնորոշ մշակված և մտածված է ներկայացնում և գործում է ուժեղ տպաւորութիւն։ Անցեալ անգամ մենք խօսեցինք նոյն հեղինակի «Բօզա Բերնտ» պիեսի մասին, որ կատարեց նոյն խումբը, բայց որքան տարբերութիւն անցեալ և այս ներկայացումների մէջ։ Նա լաւ ուսումնասիրված և մշակված չէր, իսկ «Մէնակներ» դրամայի ամեն մի կողմը լուրջ ուշադրութեան էր արժանացել։

Սիրող

III

Մեզ հաղորդում են, որ իշխան Սուվորովով, «Դաւաճանութիւն» դրամայի հեղինակը, որին հայոց դրամատիքական ընկերութեան վարչութիւնը հեռագրով յայտնել էր «Դաւաճանութիւն» դրամայի առաջին անգամ ներկայացումը Թիֆլիսի հայոց բեմի վրա, ուղղել է հետևեալ հեռագիրը վարչութեան նախագահին. «Ընդունեցէք, իշխանուհի, իմ սրտագին շնորհակալութիւնը և հաճեցէք հաղորդել տիկին Սիրանոյշին և ներկայացման բոլոր մասնակցողներին իմ ջերմ երախտագիտութիւնս»։

IV

Եկատերինօդարում, յունվարի 30 ին, քաղաքային երկրորդ ժողովարանի դահլիճում, դերասան պ. Ամօ Խարազեանը՝ իր բենեֆիսին տեղական սիրողների մասնակցութեամբ ներկայացրեց Ուրիել Ակոստա ողբերգ. 5 գործ. հեղինակութիւն Գուցկովի։

Պ. Խարազեան՝ Ուրիէլի դերում բաւարար էր, մանաւանդ վերջին գործողութիւններում։ Նրա արտաքինը, ձևերը, յոյզերը, վշտով և զայրութով լի խօսքերը՝ գործեցին տպաւորութիւն։

Օրիորդ Կիւրեղեան՝ Ցուդիթի դերում և պ. Թումանեան՝ Դէ-Սիլվայի դերում համեմատաբար բաւարար էին։ Իսկ միւս սիրող սիրողուհիները իրանց դերերում՝ առհասարակ վատ չէին։ Նկատի ունենալով նրանց հայերէնագիտութեան չափը ու բեմական ծառայութիւնը՝ անշուշտ պէտք է բարեխիղճ լինել և խիստ չը վերաբերվել նրանց հնչիւններին, ձևերին ու արտասանութիւններին։ Չէ՞ որ նրանք սկսնակներ են։

Պէտք է նկատել, որ պիեսը թարգմանված էր ոչ ամփոփ, պարզ ու սահուն ոճով և ներդաշնակ բառերով։ Պ. Խարազեան լաւ կանէր, եթէ բոլորովին ձեռք վերցնէր իր բենեֆիսներին Ուրիէլ դնելուց։

Սակայն անուրանալի է, որ Եկատերինօդարի հայկական-հասարակական անապատ կեանքում հայերէն լեզուով գրված ներկայացումները մէկ-մէկ օազիսներ են։ Եկատերինօդարցին—քիչ բացառութեամբ—մայրենի լեզուին, դաստիարակութեան, լրագրութեան և գրականութեան իսկի նշանակութիւն չի տայ. կարծէք նրա համար աւելորդ բաներ են։

Աբրահամ

ՄԻ ԿԱՐԵՒՈՐ ՊԱՀԱՆՋԻ ԱՌԻԹՈՎ

(Նամակ Հին-Նախիջևանից)

—

Վերջերս «Մշակի» առաջնորդող յօդուածներում, միշտ կարդում ենք, որ մեզանում կեանքի գործառնութեան շրջանում, էապէս չէ ճանաչված գրքի և ընթերցանութեան նշանակութիւնը և որ, ընդհանրապէս, մեր հասարակութեան մէջ հետաքրքրութիւնը շատ թոյլ է և շատ քիչ անհատներ կան, որոնք զբաղվում են լուրջ գրական ընթերցասիրութեան խնդիրների ուսումնասիրութեամբ։ Շատ ճիշտ է այդ նկատողութիւնը։

Դա մի տխուր երևոյթ է, որ իր հակայական թևերը տարածել է նաև մեր Հին-Նախիջևանի կողմերը։ Ընթերցանութիւնը մեզանում շատ դանդաղ է ընթանում։ Ընթերցանութիւնը ժողովրդի խաւերում, ակնյայտ է, պիտի արագութիւն ստանայ իր շարժման մէջ այն ներքին և անդագրում ժողովրդի, որ պիտի բղխէ ինտելիգենցիայից կամ բարձր դասակարգից։ Տարաբախտաբար, մեզանում ինտելիգենտ անհատների թիւը շատ սահմանափակ է, և եթէ կայ, նա էլ շատ թոյլ է ու անհոգ թէ դէպի ընթերցանութիւնը և թէ դէպի գեղարուեստը։ Իսկ մեր բարձր, հարուստ դասակարգից էլ ընթերցանութեան կամ մտաւոր զարգացման համար որ և է ջանք կամ նիւթական նպաստ հայցելն անգամ մթամտութիւն կը լինի։

Եւ ինչո՞ւ զարմանալ, որ մեզանում հասարակութիւնը առաջ է գնում կրքերի քայլերով, և ինչպէս նա առաջ գնայ, երբ չունի իր համար մի որ և է գաղափարական յենակէտ և ընթերցանութեան գործի ճիշտ գիտակցութիւն։

Այդ գործում «Մշակը» իր № 252-ի «Պէտք է կարդալ» առաջնորդող յօդուածի մէջ մեղաւոր և թոյլ է գտնում սակաւաթիւ գիւղական դպրոցները և քարոզիչներին, որոնք չեն գործում ժողովրդական խաւերում և գրքեր չեն մտցնում գիւղերում։ Այդ էլ ճիշտ է նկատել յարգելի լրագիրը. իսկ մենք այդ նկատման վրա կաւելացնենք, որ մեր քարոզիչները ոչ թէ թոյլ են և չեն նպաստում ընթերցանութեան տարածման ժողովրդի մէջ, այլ նոյն իսկ հէնց իրանք անգիտանում են նրա մեծ նշանակութիւնը. իսկ մեր գիւղական տարրական դպրոցները, որոնք համեմատաբար ուրիշ գաւառների հետ սակաւաթիւ չեն և հաստատ թէ բոլորն էլ գտնվում են հայ ուսուցիչների տրամադրութեան տակ, իրանց վրա պէտք է ստանձնեն այդ պարտականութիւնը և իրանց ջանքերը ժլատութեամբ չը գործադրեն այդ գործի տարածման համար։

Չէ կարելի ժխտել, որ մեր հայ ուսուցիչներից ոմանք մինչև անգամ դժուար են համարում իրանց ըստ երևոյթին հաճեստ ու սահմանափակ ոռճկից գոնէ տարեկան չնչին մի մասը զոհել մի որ և լրագիր բերել տալու կամ ընթերցանութեան գրքեր ձեռք բերելու համար, ոմանք էլ արդարանում են այն բանով, որ ժամանակ չունեն գիրք կամ լրագիր կարդալու... Իսկ ազատ զբօսանքների համար ժամանակ միշտ կայ, և կերուխումի կամ պճնազարդութեան համար ծախսելու դրամներ միշտ կը գտնվեն։

Էլ ինչով է մեղաւոր մեր ժողովուրդը, երբ իրանից աւելի հասկացողները, աւելի խելօքները այդպիսի մի ստոր ազդեցութիւն են գործում իր վրա. չէ՞ որ նա դեռ ևս այն խաւար ամբոխն է, որ իր ներքին հոգեբանական օրէնքների համաձայն պիտի ներշնչում ստանայ ու գրաւվի ընթերցանութեան գործով կամ մի այլ գաղափարով մի ուրիշի, ըստ երևոյթին հասկացողի, օրինակով, շարժումով կամ թելադրութեամբ։ Դա բաւական չէ. մեր Նախիջևանի կողմերի փոքր ի շատէ հասկացողներն էլ ծաղրում են հատատ հաստատներով ղեկավարվողներին և իրանց բարի սկզբունքը չը դաւաճանող անձանց։ Յաճախ ընթերցասէր անձին ծիծաղի կամ երգիծաբանութեան առարկայ դարձնելու համար նրա պրոչից «բանատեղծ կամ փիլիսոփայ» բառերն են կպցնում. յաճախ էլ տրդարանում են իրանց ներքին տրամաբանութեամբ, որ իբր թէ շատ կարդացողների թելը պակասում է։ Եւ եթէ նման տխուր երևոյթների եռեից ընկնենք, այն ժամանակ նրանց ծայրը շատ կերկարի և մեզ շրջապատող մթնոլորտը աւելի խաւար կերևայ։ Սակայն միջոց կայ վերացնելու այդ բոլոր թիւրիմացութիւնները, պատռելու այն թանձր խաւարը, որի մէջ դեռ խարխափում է մեր ժողովուրդը և վերջինիս սերտ կերպով կապելու ընթերցանութեան հետ. այդ այն է, որ խիստ կարևոր է, եթէ հէնց այսօրվանից Նախիջևան քաղաքը ձեռնարկէր հիմնելու մի համեստ գրադարան-ընթերցարան և մեր փոքր ի շատէ զարգացած դասակարգն էլ ժողովրդի մէջ գիւղերում ընթերցանութիւնը տարածելու գործով զբաղվէր։

Ուրիշ գաւառական քաղաքներն ունենան գրադարան, իսկ մեր քաղաքը չունենայ. դա մեզ ամենեին պատիւ չէ բերում։

Ժամանակ է, որ մենք քանիներորդ դարում ըմբռնենք ընթերցանութեան նշանակութիւնը և ընդունենք նրան մեր առաջադիմութեան ամենամեծ գործօններից մէկը։

Գարատ.

ՆԱՄԱԿ ԿԱՐԲԻ ԳԻՒՂԻՑ

—

Փետրվարի 1-ին

Կարբին, 200 տնից բաղկացած մի գիւղ, զուրկ էր դպրոցից։ Երևանաբնակ պ. Տ. Աֆրիկեանը, նկատելով իր ծննդավայրի այդ մեծ կարիքը, իր միջոցներով կառուցեց մի բաւականութիւն դպրոցի համար, և հիմք դրեց գիւղական ծխական ուսումնարանին, ուր այժմ շարունակվում է ուսումը։

Այժմ մի ուրիշ կարիք, դարձեալ գիւղական ամենամեծ ցաւերից մէկը, լուծում է Կարբու հասարակութեանը։ Ցայտնի է, որ Կարբին իր շրջակայ տասնեակ գիւղերով ունի միայն մի փոքրիկ գետակ, որից կախում ունի հազարաւոր ժողովրդի կեանքն ու տնտեսական բարւոքումը։ Պէտք է աչքով տեսնել այդ ժողովրդին ամառ ժամանակ այդ ջրի վրա լվացվելիս, իրար գլուխ չարդելիս, որ շատ անգամ վերջանում է մարդասպանութեամբ։ Շատ անգամ ջուրն իսպառ կտրվում է, չորանում, և Կարբու, Մողնու, Յովհաննու վանքի կանայք կուժը ուսներին հեռանում են գիւղից մինչև երկու վերստ և տանջանքով ջուր բերում. իսկ ձմեռը աւելի գժոխային է։ Առուները սառչում, չորանում են. այդ դեղջկուհիները կուժը շալակներին ստիպված են 3 վերստ հեռու, Քասախի անդնդախոր ձորը իջնել և ջուր բերել իրանց և տաւարի խմելու համար. կամ ընդհանրապէս գիւղին կից լճակների սառոյցները շալակով կրում հալցնում և խմեցնում են տաւարին ու իրանք բանեցնում։ Բայց այդ սառցաջրերը ամառվայ հոտած ջրերն են, որոնք խիստ վնասակար ցաւեր են առաջացնում թէ մարդկանց և թէ անասունների մէջ։

Այժմ Կարբու հասարակութեանը յուզում է Ջ... խնդիրը։ Բայց ընութիւնը այդ դէպքում ունի իր առատ պարգևը, որից օգտվելու համար՝ գիւղացուն պէտք է փող։ Կարբի գիւղից դէպի հիւսիս, Սաղմոսավանք գիւղի արևելեան կողմում, ձորի մէջ, մի ապառաժի կրծքից հոսում է հրաշալի մի աղբիւր, որ մի քանի քայլ վազելուց յետոյ, կրկին անհետանում է երկրի սրտում։ Այդ ջրի խորութեան կշիռը հաւասարվում է Կարբու դաշտավայրերի սահմանագլխին։ Այդ ջուրը բաւական կը լինի առատութեամբ ոռոգելու գիւղապատկան բոլոր արգաւանդները, լճացնելով նրան այն մեծ աւազանում, որը այժմ էլ ծառայում է այդ բանի համար, իր մէջ հաւաքելով Դալուչայ գետակի հետ կապ ունեցող բարակ առուները։

Ահա այդ ջուրն է կամենում բերել հասարակութիւնը, որով ընդ միշտ գիւղը կազատվի այժմեան տառապանքից։ Մակարդակն արդէն կազմված է, և ծախսը հաշուում են մինչև 24 հազար ռուբլի։ Հասարակութեան կողմից դիմումն է եղել, ուր որ հարկն է և ստացվել պատշաճաւոր թոյլտուութիւն, և այդ աղբիւրն արդէն պատկանում է Կարբու հասարակութեանը։ Դրանից 1/2 վերշոկի չափ բաժին է տրվում Յովհաննու վանքին իբրև նուէր այդ հռչակաւոր որբավայրին. գուցէ և նոյն չափ բաժին տրվի Մողնու վանքին, բայց դա գիւղի հասարակութեան կամքից է կախված։ Կարբին ունենալով իր ջուրը, նա որպէս աշխատասէր և եռանդուն մի ռաշբար, անմիջապէս կը տնկի խաղողի թփեր, և դրանով նա կը ստեղծէ իր համար արդիւնաբերութեան մի նոր աղբիւր, խիստ մեծ և օգտաւէտ։ Իսկ փորձով արդէն տեսնված է, որ Կարբու շրջանի խաղողն ու գինին ամենաընտիր տեսակն են։ Հնումը կային մի քանի այգիներ, բայց ջրի սակաւութեան պատճառով քանդվեցին։

Ահա այդ կարևոր խնդիրը գլուխ բերելու համար կրկին իրանց օժանդակութիւնն են խոստացել եղբ. Աֆրիկեանները, որոնց օգնութիւնը եթէ չը լինի, կարծում ենք հազիւ թէ իրականանայ գործը. հետևապէս և գիւղը, մասամբ էլ նրանց վրա յոյս դրած, ձեռնարկել է այդ գործին։

Կարծում ենք, որ եղբ. Աֆրիկեանները, յաւերժացնելու համար իրանց հանգուցեալ հօր յիշատակը, այդ ծննդավայրում կը կանգնեցնեն մի այդպիսի անմահ յիշատակ, և հազարաւոր մարդիկ նրանով կազատվեն ջրի տառապանքից ու կը բարւոքվի նրանց ներկայ տնտեսական աղքատ դրութիւնը։

Դա աւելի քան մի վեհանձն գործ է, և նրանով պէտք է մշտապէս օգտվի ընդհանրութիւնը։

Մուշ. Բագրատունի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» ներկայ հատորը բաղկացած է 1½ թերթից։

—

Կիրակի, փետրվարի 5-ին, Թիֆլիսի Ալէքսանդրօ-Նեվսկեան զինուորական տաճարում, ցերեկվայ ժամը 3½-ին կատարվեց հոգեհանգիստ նոր վախճանված Մեծ Իշխան Սերգէյ Ալէքսանդրովիչի համար։ Հոգեհանգստեան ծիսակատարութիւնից առաջ Վքստօրգով քահանան կարդաց Մեծ Իշխանի մահվան մասին եղած հաղորդագրութիւնը և մի քարոզ խօսեց օրվայ դէպքի առիթով։ Հոգեհանգստին ներկայ էին Կովկասի կառավարչապետի օգնական գեներալ-լեյտենանտ Մալաման և բոլոր բարձր պաշտօնեաները՝ թէ քաղաքացիական և թէ զինուորական ու հոգևոր վարչութիւններում ծառայող։

—

Յունվարի 31-ին, երեկոյեան ժամը 9½-ին Թագիրում անյայտ հայ յեղափոխականները սպանել են պլաստունների գնդի պօղեսաուլ Գնուտովին։ Եռանդուն մարդոցներ են ձեռք առնված գործը պարզելու և սպանողներին ձերբակալելու համար։ (Кавказъ)

—

Ամսիս 6-ը քաղաքիս Հալաբար թաղի համար անմոռանալի օր կը լինի։ Այդ օրը քաղաքի ներկայացուցիչները, զեկավար ունենալով քաղաքագլխին, առաջին անգամը հնարաւորութիւն տուին հալաբարցիներին անձամբ ներկայացնելու մի զեղուցում իրանց ցաւերի մասին և նրանց հետ սրտաբաց խօսելու այդ ամենի մասին։ Այդ օրվայ նիստը կայացաւ պ. Արաքսեանի թատրօնում, ուր հաւաքված էին 1000-ից աւելի երկու սեռի և ամեն դասակարգի հալաբարցիներ, քաղաքագլուխը և շատ ձայնաւորներ։ Այս ժողովի նախաձեռնութիւնը, պէտք է խոստովանվել, պատկանում էր սանիտարական հոգաբարձու պ. Միրզոյեանին, որից միանգամայն գոհ է Հալաբարի հասարակութիւնը։ Զեկուցումը բաղկացած էր 14 կէտերից, որոնց մի առ մի պ. քաղաքագլուխը կարդում էր, յայտնում իր դիտողութիւնները և ապա խնդրում ժողովականներին պարզ յայտնել իրանց կարծիքները դրված խնդիրների մասին։ Ժողովականներից այնպիսի քաղաքավարի, լուրջ և նոյն իսկ պերճ լեզուով ընդդիմախօսութիւններ կամ կարծիքներ էին լսվում, որ մարդ մի բօպէ մոռանում էր, թէ այս ամենը կատարվում է քաղաքիս այդ ամենից մոռացված և արհամարհված թաղում և ոչ թէ քաղաքային խորհրդարանում։ Այդ հաղար մարդուց բաղկացած ժողովը մինչև վերջ այնպիսի կարգ ու կանոնով և քաղաքավարութեամբ ընթացաւ, որ ամենքը հեռացան միանգամայն հիացած։ Այդ օրը մի և նոյն ժամանակ հալաբարցու համար նրա հասունութեան վկայական ստանալու օրն էր։ Ցիշենք զեկուցման մէջ յիշված կէտերից մի քանիսը. 1) Միացնել Հալաբարը քաղաքիս հետ էլէքտրաքարշով։ 2) Մի քանի տեղերում ջուր դուրս բերել։ 3) Հեռացնել այժմեան շուրթեանը։ Դրանից 1/2 վերշոկի չափ բաժին է տրվում Յովհաննու վանքին իբրև նուէր այդ հռչակաւոր որբավայրին. գուցէ և նոյն չափ բաժին տրվի Մողնու վանքին, բայց դա գիւղի հասարակութեան կամքից է կախված։ Կարբին ունենալով իր ջուրը, նա որպէս աշխատասէր և եռանդուն մի ռաշբար, անմիջապէս կը տնկի խաղողի թփեր, և դրանով նա կը ստեղծէ իր համար արդիւնաբերութեան մի նոր աղբիւր, խիստ մեծ և օգտաւէտ։ Իսկ փորձով արդէն տեսնված է, որ Կարբու շրջանի խաղողն ու գինին ամենաընտիր տեսակն են։ Հնումը կային մի քանի այգիներ, բայց ջրի սակաւութեան պատճառով քանդվեցին։

Ահա այդ կարևոր խնդիրը գլուխ բերելու համար կրկին իրանց օժանդակութիւնն են խոստացել եղբ. Աֆրիկեանները, որոնց օգնութիւնը եթէ չը լինի, կարծում ենք հազիւ թէ իրականանայ գործը. հետևապէս և գիւղը, մասամբ էլ նրանց վրա յոյս դրած, ձեռնարկել է այդ գործին։

Կարծում ենք, որ եղբ. Աֆրիկեանները, յաւերժացնելու համար իրանց հանգուցեալ հօր յիշատակը, այդ ծննդավայրում կը կանգնեցնեն մի այդպիսի անմահ յիշատակ, և հազարաւոր մարդիկ նրանով կազատվեն ջրի տառապանքից ու կը բարւոքվի նրանց ներկայ տնտեսական աղքատ դրութիւնը։

Դա աւելի քան մի վեհանձն գործ է, և նրանով պէտք է մշտապէս օգտվի ընդհանրութիւնը։

Մուշ. Բագրատունի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» ներկայ հատորը բաղկացած է 1½ թերթից։

—

Կիրակի, փետրվարի 5-ին, Թիֆլիսի Ալէքսանդրօ-Նեվսկեան զինուորական տաճարում, ցերեկվայ ժամը 3½-ին կատարվեց հոգեհանգիստ նոր վախճանված Մեծ Իշխան Սերգէյ Ալէքսանդրովիչի համար։ Հոգեհանգստեան ծիսակատարութիւնից առաջ Վքստօրգով քահանան կարդաց Մեծ Իշխանի մահվան մասին եղած հաղորդագրութիւնը և մի քարոզ խօսեց օրվայ դէպքի առիթով։ Հոգեհանգստին ներկայ էին Կովկասի կառավարչապետի օգնական գեներալ-լեյտենանտ Մալաման և բոլոր բարձր պաշտօնեաները՝ թէ քաղաքացիական և թէ զինուորական ու հոգևոր վարչութիւններում ծառայող։

—

Յունվարի 31-ին, երեկոյեան ժամը 9½-ին Թագիրում անյայտ հայ յեղափոխականները սպանել են պլաստունների գնդի պօղեսաուլ Գնուտովին։ Եռանդուն մարդոցներ են ձեռք առնված գործը պարզելու և սպանողներին ձերբակալելու համար։ (Кавказъ)

—

Ամսիս 6-ը քաղաքիս Հալաբար թաղի համար անմոռանալի օր կը լինի։ Այդ օրը քաղաքի ներկայացուցիչները, զեկավար ունենալով քաղաքագլխին, առաջին անգամը հնարաւորութիւն տուին հալաբարցիներին անձամբ ներկայացնելու մի զեղուցում իրանց ցաւերի մասին և նրանց հետ սրտաբաց խօսելու այդ ամենի մասին։ Այդ օրվայ նիստը կայացաւ պ. Արաքսեանի թատրօնում, ուր հաւաքված էին 1000-ից աւելի երկու սեռի և ամեն դասակարգի հալաբարցիներ, քաղաքագլուխը և շատ ձայնաւորներ։ Այս ժողովի նախաձեռնութիւնը, պէտք է խոստովանվել, պատկանում էր սանիտարական հոգաբարձու պ. Միրզոյեանին, որից միանգամայն գոհ է Հալաբարի հասարակութիւնը։ Զեկուցումը բաղկացած էր 14 կէտերից, որոնց մի առ մի պ. քաղաքագլուխը կարդում էր, յայտնում իր դիտողութիւնները և ապա խնդրում ժողովականներին պարզ յայտնել իրանց կարծիքները դրված խնդիրների մասին։ Ժողովականներից այնպիսի քաղաքավարի, լուրջ և նոյն իսկ պերճ լեզուով ընդդիմախօսութիւններ կամ կարծիքներ էին լսվում, որ մարդ մի բօպէ մոռանում էր, թէ այս ամենը կատարվում է քաղաքիս այդ ամենից մոռացված և արհամարհված թաղում և ոչ թէ քաղաքային խորհրդարանում։ Այդ հաղար մարդուց բաղկացած ժողովը մինչև վերջ այնպիսի կարգ ու կանոնով և քաղաքավարութեամբ ընթացաւ, որ ամենքը հեռացան միանգամայն հիացած։ Այդ օրը մի և նոյն ժամանակ հալաբարցու համար նրա հասունութեան վկայական ստանալու օրն էր։ Ցիշենք զեկուցման մէջ յիշված կէտերից մի քանիսը. 1) Միացնել Հալաբարը քաղաքիս հետ էլէքտրաքարշով։ 2) Մի քանի տեղերում ջուր դուրս բերել։ 3) Հեռացնել այժմեան շու-

կան իր տեղից դէպի զինուորական պաշարի պահեստատեղի հրապարակը և նրա տեղում շինել սկսեր։ 4) Բաց անել գիմնազիական զուգընթացներ տեխնիկական դպրոցի փոխարէն։ 5) Միջնորդել, ուր հարկն է, կիսակայարան բաց անել երկաթուղու գծի վրա Հալաբարում։ 6) Պարտաւորեցնել քաղաքային բժիշկ Պրօզերօվսկուն ապրել Հալաբարում։ 7) Թաղային բուժարանում աւելացնել մի բժիշկ ևս, որովհետև 45,000 բնակչի համար մէկը քիչ է և այլն։ Լսելով այս ամենի մասին թեր և դէմ կարծիքներ, պ. քաղաքագլուխը յայտնեց, որ որքան այդ իր իրաւունքից կախված կը լինի, անմիջապէս կը կատարվի։

—

Ամսիս 5-ին քաղաքագլխի թոյլտուութեամբ կայացաւ քաղաքային վարչութեան շինութեան մէջ վարչութեան թէ ներսի և թէ դրսի բոլոր ծառայողների ընդհանուր ժողովը՝ խորհրդակցելու իրանց կարիքների մասին։ Ժողովը ընտրեց 7 հոգուց բաղկացած մի յանձնաժողով, որին պարտաւորեցրեց կազմել իրանց բոլոր առաջարկվելիք պահանջների ծրագրի նախագիծը և ներկայացնել կրկին ընդհանուր ժողովի քննութեանը։ Վերջինս՝ թերութիւնները լրացնելով, կը յանձնարարէ ծրագիրը ներկայացնել քաղաքագլխին։ Յանձնաժողովի անդամներն են՝ 1) բժ. Ստեփանեանց, 2) Զրէլաեվ, 3) փաստաբան Քանանեանց, 4) Յ. Թադէոսեանց, 5) բժ. Ռազամատ, 6) Շահվերդեանց և 7) Ալիբէգեան։ Առաջիկայ համարում կը հաղորդենք մանրամասնութիւնները այդ հետաքրքրական ժողովի մասին։

—

Ռուսական բժիշկների ընկերութիւնն առաջարկել էր Կովկասի բժշկական ընկերութեան քննութեանը հետևեալ հարցը. ժողովրդական կեանքի մէջ ի՞նչ անհրաժեշտ փոփոխութիւններ են հարկաւոր, ի հարկէ ժողովրդական առողջութեան պահանջներից ծնունդ առած և բժշկական—սանիտարական կարիքների տեսակէտից, միայն համապատասխան նաև ժամանակի հասունացած պահանջներին։ Կովկասի բժշկական ընկերութիւնն ընտրել էր մի յատուկ յանձնաժողով այդ լուրջ և ժամանակակից հարցը քննելու համար։ Քննութեան արդիւնքներից լայն հասարակական նշանակութիւն ունի յանձնաժողովի հետևեալ եզրակացութիւնը. ցանկալի է, որ բժշկական-սանիտարական գործը Կովկասում կազմակերպվի զեմստվօյական հիմունքների վրա, 60-ական թւականների օրէնքների համաձայն։

—

Թիֆլիսի դումայի ձայնաւոր Ն. Ի. Թամամշևանը առաջարկութիւն է արել քաղաքագլխին, որ իշխան Սվեատոպոլկ-Միրսկուն հեռագիր ուղարկվի ինքնավարութեան կողմից, իշխանի մինիստրական պաշտօնից հրաժարման պատճառով հեռանալու առիթով։ Այդ առաջարկը դումայում պէտք է քննութեան դրվէր երէկ երեկոյեան։

—

ԹԱՒՐԻԶԻՑ, պ. Յովսէփ Կարախանեանցը խնդրում է մեզ տպել հետևեալը. «Խնդրում եմ թոյլ տաք ինձ՝ յուզված կրքերը խաղաղացնելու համար, յայտարարել ձեր թերթի միջոցով, որ «Մշակի» անցած տարվայ № 277 համարի մէջ տպված Իրանցի ստորագրութիւնը կրող յօդուածը՝ Ատրպատականի թեմի գործերի մասին, իմ գրչին չէ պատկանում»։

—

ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻՑ մեզ խնդրում են տպել հետևեալը. «Մշակի» մէջ լոյս տեսած հրաւէրը, օգնել Նոր-Բայազէտի գրադարան-ընթերցարանին, արձագանք գտաւ և ստացվեցին գրքեր Յ. Դաւթեանից, Տ. Կոստանեանից, Արշակ վարդապետից, Ս. Ծոցիկեանից, Գ. Ղասապեանից և Սալումեանից, որոնց և շատերում ենք յայտնել մեր խորին շնորհակալութիւնը և հրաւիրում ենք Թիֆլիսում և Բագուում գտնվող Նոր-բայազէտցի երիտասարդներին, ըստ թվվել իրանց անտարբեր դրութիւնից, օրինակ վերցնել վերոյիշեալներից և օգնել իրանց հայրենիքի նորաբաց հաստատութեանը»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

Լուրեր հաշտութիւն կնքելու մասին։ «Daily Chron.» անգլիական լրագրի Պետերբուրգի թղթակիցը հաղորդում է, իր ասելով հաւաստի աղբիւրից, այն պայմանները, որոնք կառաջարկվեն Եապոնիայի կողմից հաշտութիւն կնքելու համար։ Ռուսաստանը և Եապոնիան պէտք է ճանաչեն Չինաստանի վեհապետութիւնը Մանջուրիայի և Լեաօդունեան թերակղզու վրա Պօրտ-Արտուրի հետ միասին, սակայն Չինաստանին յանձնարարվում է կապալով տալ եապոնացիներին Պօրտ-Արտուրը 99 տարով։ Ռուսաստանը կը թողնէ Մանջուրիան, բայց կը պահէ Սախալինը, Վլադիվոստոկը և Ուսսուրեան երկիրը։ Պատերազմական տուգանք Ռուսաստանը չի վճարի։ (Б. Вѣд.)

—Զը նայելով ռուսաց կառավարութեան աղդու յայտարարութեան՝ թէ նա թոյլ չի տայ ոչ մի միջամտութիւն իր և Եապոնիայի միջև և թէ իր ժամանակին Ռուսաստանը կը թելադրէ Եապոնիային հաշտութեան պայմանները առանց կողմնակի օգնութեան, այնու ամենայնիւ անգլո-ամերիկական մամուլը նորից զբաղվում է մեծ պետութիւնների միջամտութեան հարցով։ Ամերիկան տարակուսած ցնցել է, թէ ինչու Ռուսաստանը մի ամբողջ շարք եապոնական յաղթութիւններից յետոյ, շարունակում է յամառել իր անօգուտ կռուի մէջ Մանջուրիայի դաշտերի վրա, ուստի և ամեն տեսակ մեկնութիւն է տալիս դրան։ «New Iork Times» լրագիրը, ամփոփելով Ամերիկայի հայեացքները, հարց է տալիս. ինչ յոյս է տածում Ռուսաստանը, շարունակելով իր անվերջ—անաջող փորձերը՝ լուել Եապոնիայի հետ։ Ամերիկական այս երազմական շրջանները անցեալի փորձից և ներկայի դէպքերից այն եզրակացութեան են գալիս, որ առաջին վճռական ճակատամարտը աւելի ևս կը հաստատէ եապոնական զօրքի գերակշռութիւնը ռուսականի վրա և այն ժամանակ ռուսական պատիւը փրկելու համար մեծ պետութիւնների միջամտութիւնը իբր թէ անհրաժեշտ կը լինի։ (Р.)

Գենեռալ Կուրոպատկինի գործողութիւնների կրիտիկայի առիթով։ Ինչպէս առաջները հաղորդեցինք, գենեռալ Կուրոպատկինի, իբրև գլխաւոր հրամանատարի, գործողութիւնները վերջերս սկսեցին ենթարկվել սաստիկ կրիտիկայի եւրոպական մամուլի և պատերազմական քննադատների կողմից։ Սակայն «Neue Freie Presse» լրագրի կրիտիկոսը համաձայն չէ այդ խիստ քննադատութեան հետ և ասում է. «Կուրոպատկինի զգուշաւորութիւնը ամենևին չը պէտք է մեկնվեր իբրև սխալ,—ընդհակառակը, նա բոլորովին հասկանալի է դառնում հանգամանքներից։ Պէտք է ի հիմատի ունենալ, որ շտապ արշաւումը կարող էր վտանգի ենթարկել ամբողջ բանակը և ամբողջ արշաւանքը։ Եթէ ներկայ բոպէում զգուշաւորութիւնը չը համարել առաքինութիւն, ուրեմն նա երբէք առաքինութիւն չէ եղել. հազարաւոր կիլոմէտր Եւրոպայից հեռու տարածութեան վրա զօրավարը իրաւունք չունի բիսկանել։ Հէնց դրա մէջ է կայանում տարբերութիւնը ներկայ պատերազմի և անցեալի եւրոպական պատերազմների մէջ։ (Правит. Вѣст.)

Սանդէպուի կռուի հետեւանքները։ Այս տարվայ յունվարի 12—16-ին տեղի ունեցած ճակատամարտը Սանդէպուի մօտ ծանր հետեւանքներ ունեցաւ և մեծ փոփոխութիւններ առաջ բերեց ռուսաց մանջուրական բանակի հրամանատարութեան կազմի մէջ։ Մանաւանդ արտասահմանեան մամուլի մէջ շատ մեկնութիւններ են տրվում ռուսական զէնքի այդ նոր անաջողութեան պատճառներին, որ ոչնչացրեց այնքան վաղաժամ յոյսեր։ Մանջուրական 2-դ բանակի հրամանատարը, գենեռալ Գրիպպենբերգ, որ հազիւ 3 ամիս վարեց հրամանատարութիւնը, արձակվեց իր պաշտօնից և նրա տեղ նշանակվեց գենեռալ Կաուլբարսը, որ 3-դ բանակի հրամանատարն էր, իսկ սրա տեղ նշանակվում է, լուրերին նայելով, գենեռալ Գրոդէկովը, որ 1900 թ. Մանջուրիայի արշաւանքի ղեկավարն էր։ Արտասահմանեան մամուլի մէջ երևացին լուրեր, թէ Սանդէպուի մօտ եղած ճակատամարտի անաջողութեան գլխաւոր պատճառը եղել է այն, որ գենեռալ Գրիպպենբերգը, արշաւումն սկսելով եապոնական բանակի դէմ, իր ժամանակին ոչ միայն աջակցութիւն չէր ստացել ընդհանուր հրամանատար Կուրոպատկինի կողմից, այլ և հրամայել էր նրան նահանջել, իսկ Գրիպպենբերգ արշաւումն սկսելիս յայտնել էր զօրքին, որ «իրաւունք է տալիս խփել իրան, եթէ ինքն նահանջելու լինի»։ Կատարելով ընդհանուր հրամանատարի հրամանը, ստիպված էր թողնել իր պաշտօնը։ Այդ անաջող արշաւանքի ժամանակ ռուսաց կորուստը շատ մեծ եղաւ. «Нов. Вр.» լրագրի տպած հեռագրի համաձայն, զինուորների կորուստը եղել է 13,000 զինուոր և 397 օֆիցէր, որոնց մէջ 6 գենեռալ։ Բացի դրանից, երբ գենեռալ Գրիպպենբերգը նահանջեց, եապոնացիները հետևեցին նրան և հասան մինչև Զժանտան-Խէնանին, Խունխէ գետի ափին, 8 վերստ հեռու Խէյգուտայից դիպի հիւսիս։ Զժանտան Խէնանին և նրա դիմաց, Խունխէ գետի աջ ափին գտնվող Զժանտան գիւղը հանդիսանում են ամենակարևոր ռազմագիտական կէտեր, որոնք տիրապետում են Սինմինտին և Մուկդէն տանող ճանապարհների վրա։ Զժանտանի առումը կը բանար եապոնացիների առաջ ճանապարհ դէպի Սինմինտին և կը դնէր գենեռալ Կուրոպատկինին վտանգաւոր դրութեան մէջ։ (Р. В.)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

5 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գենեռալ-ադիւտանտ Կուրոպատկինի հեռագիրը Նորին Կայսերական Մեծութեան Անունով 1905 թւի փետրվարի 3-ից. «Ստացված տեղեկութիւնների պատճառով այն մասին, թէ Մօնգօլիայում, Գունչժուլին—Կուանչենցի երկաթուղիների մասի դէմ հաւաքվում են խունխուզների նշանաւոր աւազակախմբեր, եապոնացիների առաջնորդութեամբ, Ֆանցզիատուն կայարանից յունվարի 29-ին խուզարկութեան համար ուղարկվեց սահմանապահների մի զօրաբաժին բոտմիստր Լէնիցկու հրամանատարութեամբ։ Տեղեկութիւն ստանալով, որ յունվարի 30-ին յարձակումն են գործել կամուրջի վրա Խանցզեատուն կայարանի մօտ, բոտմիստր Լէնիցկի կարեց երկաթուղուց հեռացող եապոնացիների և խունխուզների ճանապարհը, յարձակումն գործեց և ցրվեց նրանց։ Յետ նահանջողներին հալածելով, բոտմիստր Լէնիցկին 120 վերստ դէպի հիւսիս-արևմուտք Գունչժուլինից հանդիպեց խիստ գերազանցող ոյժերին, բաղկացած մինչև 6 էսկադրօն և 4 վաշտ եապոնացիներից և 2000-ից աւել խունխուզներից։ Ամեն կողմից շրջապատված, մեր հարիւրեակները, ձեռնամարտ ընդհարումից յետոյ, յետ անցան և նահանջեցին դէպի Գունչժուլին կայարանը, ուր զօրաբաժինը հասաւ երեկոյեան փետրվարի 2-ին։ Վերոգրեալի մասին ամենահպատակօրէն զեկուցանում եմ Ձեր Կայսերական Մեծութեանը»։—Գենեռալ լեյտենանտ Սախարովի հեռագիրը գլխաւոր շտաբին 1905 թւի փետրվարի 5-ից. «Գլխաւոր հրամանատարը ստացել է գենեռալ Զիչագովի զեկուցումը, որի մէջ կան բոտմիստր Լէնիցկու սահմանապահ զօրաբաժնի մեծ մասի յետ նահանջման մանրամասնութիւնները։ Փետրվարի 1-ի կուից յետոյ, բոտմիստր Լէնիցկու զօրաբաժնի մէջ գտնվող բոտմիստր Բայարինով 90 զինուորներով հրաման ստացաւ կանգնեցնել հակառակորդի արշաւանքը, որպէս զի հնար լինի դուրս բերել զօրաբաժնի արտիլէրիան, բայց փետրվարի 1-ին երեկոյեան 9 ժամին կտրվեց բոտմիստր Լէնիցկուց Եանցիատուն գիւղի մօտ Սանդաշինից 25 վերստ դէպի հիւսիս։ Հակառակորդը, որի ոյժերը բաղկացած էին վեց էսկադրօնից և մինչև 1000 հետևակ զինուորներից, շրջապատվեց ամեն կողմից։ Բոտմիստր Բօեարինով, ձիուց իջնելով, կանգնեցրեց եապոնացիների արշաւանքը, բայց երբ եապոնական երկու էսկադրօն աստիճանական կարգով երևացին նրա թևի կողմից, նստեցրեց մարդկանց և 150 քայլից յարձակում գործեց ձախակողմեան առաջաւոր էսկադրօնի վրա, կտոր կտոր անելով նրան ի տես երկրորդ էսկադրօնի և մօտեցող հետևակի, որոնք, ոչինչ չը ձեռնարկելով, աղաղակում էին միայն «ուրա» և «բանզայ»։ Ապա, 400 քայլ հեռանալով, բոտմիստր Բոյարինով, ձիուց իջեցնելով մարդկանց մի մասը, մի քանի անգամ գնդակոծեց և իր հետ վերցնելով փորից ծանր վիրաւորված շտաբ-բոտմիստր Կոլէսնիկովին, 24 վիրաւորված և 3 սպանված զինուորների, սկսեց կամաց կամաց հեռանալ դէպի ճանապարհը, ուղեկցվելով գընդակահարութեամբ ճակատից և թևերից։ Եւ որովհետև զօրաբաժնում կային առանց ձիերի մարդիկ, որոնց ձիերը սպանվել էին, այդ պատճառով բոտմիստր Բոյարինով սկսեց հեռանալ քայլ առ քայլ, ուստի այդ մարդիկ բռնում էին ամեն կողմը փախչող ձիերին։ Ապա եապոնական խուզարկուները շարունակում էին անդադար հալածել 20 վերստ երկարութեամբ և պաշտպանվելով, բոտմիստր Բոյարինով փետրվարի 3-ին եկաւ Ֆանցզեատուն կայարանը, իր հետ բերելով վերքից մեռած շտաբ-բոտմիստր Կոլէսնիկովին, 24 վիրաւոր և երեք սպանված զինուորներին։ Այդպիսով բոտմիստր Բոյարինով քաջ յարձակվաբ և փառաւոր գործողութիւններով հրաւիրեց իր վրա հակառակորդի գլխաւոր ոյժերը և ամեն կողմից շրջապատվելով հակառակորդի գերազանց ոյժերով, ճանապարհ բացեց, դուրս բերելով վիրաւոր և սպանված ընկերներին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 փետրվարի։ Նոր թատրոնում արտիստ Գօրբէվի բենեֆիսին խաղացվեց «Старый баринъ» պիեսը։ Մեծ աշողութիւն։

ՏՕԿԻՕ։ Եապոնական ճակատը ներկայումս ձգված է 40 վերստից աւելի երկարութեամբ։ Մի քանի կէտերում հակառակորդներին բաժանում է միայն հազար մետր։ Զօրքերը տանջվում են սաստիկ սառնամանիքներից։—Նորերս ծովն իջեցրվեցին երեք ականանաւեր։—Շուտով կը հրատարակվի նոր ներքին փոխառութիւն։

ԼՕՆԴՕՆ։ Կաբինէտի գոյութիւնը ապահովված է, թէպէտ և այժմեան մեծամասնութիւնը կիսով պակաս է առաջվանից։

ՊՍԿՕՎ։ Փակվեց հերթական նահանգական զեմստվօի ժողովը հասարակութեան օրատրուկցիայի պատճառով։ Ընտրութիւնները յետաձգված են մինչև մերձակայ արտակարգ ժողովը։

ԿԱԶԱՆ։ Վոլգայի շոգենաւային ֆիրմաները վճռեցին ներկայ նաւագնացութեան ժամանակ բանալ կանոնաւոր ապրանք մարդատար երթևեկութիւն Օկա գետի վրա Նիժնի-Նովգորոդի և Մոսկվայի միջև։—Արհեստաւորների հասարակութիւնը հեռագիր ուղարկեց Կուրոպատկինին խնդրելով ծանուցանել ռուսական բանակին, որ չեն պակասել Ռուսաց Երկրից Մեծ Թագաւորի անկեղծ հպատակներ, հայրենիքի հաւատարիմ զաւակներ, որոնք ամբողջ սրտով սիրում են իրանց զաւակներին և եղբայրներին պատերազմի մէջ, ուրախանում են նրանց ուրախութիւններով և տանջվում են նրանց տանջանքով։ Հասարակութիւնը ստացաւ գեներալ Կուրոպատկին պատասխան հեռագիրը շնորհակալութեան արտայայտութեամբ։

ՕՐԷՕԼ, 5 փետրվարի։ Թագաւոր Կայսրը Բարձրագոյն բարեհաճեց, որ «Ալէքսէեվսկի» անուանվի երկրորդ արական գիմնազիան, Թագաժառանգ Ցէսարեվիչի ծնունդը յաւերժացնելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Այսօր, ցերեկվայ 2 ժամին, Ցարսկոէ-Սէլօի Ալէքսանդրովեան պալատում, ներկայութեամբ Թագաւոր Կայսրի, Թագուհի-Կայսրուհիների և Կայսերական Ընտանիքի Անդամների, հոգեհանգիստ կատարվեց Մեծ Իշխան Սերգի Ալէքսանդրովիչի համար։ Երկրորդ հոգեհանգիստ կատարվեց Պետերբուրգում, Իսակիեվսկի տաճարում, ներկայութեամբ պետական բարձրաստիճան պաշտօնեաների, դիպլոմատիական մարմնի ներկայացուցիչների, գենեռալների, պալատականների և տիկինների։

ՏՕԿԻՕ, 4 փետրվարի։ Ներկայ հանգամանքներում ապարդիւն կը լինի միջնորդութեան վերաբերեալ առաջարկութիւնը, որովհետև Եապոնիան, ըստ ամենայն հաւանականութեան, չի ցանկանայ երևան հանել, թէ ինքն ինչպէս է այդ բանին վերաբերվում, և նա միայն այն դէպքում կը համաձայնվէր, եթէ Ռուսաստանը ցանկանար նրան մօտենալ այնպիսի ներկայացուցչի միջոցով, որը կունենար բաւարար լիազօրութիւններ։

ՏՕԿԻՕ, 5 փետրվարի։ Պաշտօնական։ Ռուսները շարունակում էին արտիլէրիական հրաձգութիւն հինգշաբթի և ուրբաթ։ Սուսիէնֆանում գտնվում են ռուսական հեծելազօրքի զօրեղ մասսաներ։ Տաժուշանօի մօտ ռուսներ ամենևին չը կան։

ՊԱՐԻԶ։ Իմանալով Մեծ Իշխանի սպանութեան մասին, Լուբէ անյապաղ ուղարկեց ցաւակցական հեռագիրներ Թագաւոր Կայսրին և Մեծ Իշխանուհի Ելիսավետա Ֆէօդորօվնային։

ՊԱՐԻԶ։ «Պրօնզիտէնի» և «Պրօզորլիվի» ռուս ականանաւերը եկան Տունիս և ուղղորվում են Պօրտ-Սաիդ։

ԼՕՆԴՕՆ։ Դէվիտ, իրլանդական պարագլուխներից մէկը, հրատարակեց մի խօսակցութիւն, որ ունեցել էր մի քանի շաբաթ առաջ Կրէմլում, հանգուցեալ Մեծ Իշխան Սերգի Ալէքսանդրովիչի հետ։ Նա այդ խօսակցութիւնից այն տպաւորութիւնը դուրս բերեց, որ Մեծ Իշխանը ինքն ըստ ինքեան անընդունակ էր խստասրտութեան և շատ հետաքրքրվում էր, թէ ինչպէս բարեաբէ Մոսկվայի բանւորների յատուկ պայմանները։ Նրա սպանութիւնը կը խորտակէ Մեծ Իշխանի սկսած բարի գործը և խստութեան միջոցներ կառաջացնէ։ Բէֆորմները հնարաւոր են միայն ժողովրդի դատարակութեան պայմանով, իսկ սպանութիւնը գանդաղեցնում է իւրաքանչիւր առաջադիմութիւն։

ԼՕՆԴՕՆ։ Բարձր պաշտօնական շրջաններում տիրող կարծիքը կատարելապէս համաձայն է «Times»-ի հետ, որը յայտնում է, թէ չէ

կարելի թույլ տալ, որ պախարակման և բարոյական դատապարտութեան զգացմունքները, որով ամբողջ կրթված աշխարհը վերաբերվում է Մեծ Իշխան Սերգի Ալէքսանդրովիչի սպանութեան նման յանցանքներին, կարող լինէին թուլանալ որ և է այլ խորհրդածութիւնով։

6 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ներքին գործերի մինիստրը որոշեց յայտնել «Наши Дни» և «Наша Жизнь» լրագիրներին երրորդ նախազգուշութիւն և դադարեցնել այդ հրատարակութիւնները և թը ամսով։—Բարձրագոյն հրամայված է Պետերբուրգի զինուորական շրջանի գվարդիական գօրքերին Նորին Բարձրութիւն Մեծ Իշխան Սերգի Ալէքսանդրովիչի մահվան առիթով սուգ պահել երեք ամսով։

ՄՕՍԿՎԱ, 5 փետրվարի։ Զուգով վանքում հոգեհանգիստ կատարվեց, ներկայութեամբ Մեծ Իշխանուհի Ելիսաւետա Ֆէոդորովնայի, Մեծ Իշխանուհի Մարիա Պաւլովնայի, Մեծ Իշխաններ Կոնստանտին Կոնստանտինովիչի և Դմիտրի Պաւլովիչի և մայրաքաղաքի իշխանութիւնների։ Մեծ Իշխանի նշխարքը դրված է կաղնու դագաղի մէջ ոսկէ ծածկոցի տակ։ Դագաղի վերին մասում ծածկոցը յետ է ծալված և այդ մասը ծածկված է թանձր սպիտակ կիսէյով. կիսէյի տակից երևում է հաժաղեստը։ Դագաղը դրված է կատաֆալկի վրա ահագին արմաւենիների միջև։ Շուրջը կանգնած է պատուաւոր պահակ։ Հանգուցեալի կրծքի վրա դրված է պատկեր, որին համբուրում է նշխարքին երկրպագելու համար ներս թողած ժողովուրդը։

ԲԵՐԼԻՆ, 5 փետրվարի։ Վիլհէլմ կայսրը այցելեց կոմս Օստէն Սակէնին և մնաց նրա մոտ 3/4 ժամ։ Կառավարութիւնը մտցրեց պատգամաւորների ժողովը խոստացված ըէֆորմների ծրագիրը, որով արգելվում են գործադուլները լեռնային գործատներում։

ՊԱՐԻԶ, 5 փետրվարի։ Ժամանեց Կ. Պոլսի ֆրանսիական դեսպան Կոնստան։—Դէլկասէ յանձնեց Բօմպարին Ֆրանսիայի անունից յայտնել ռուսաց կառավարութեանը իր համակրութիւնների և ցաւակցութեան արտայայտութիւնը։

ՎԻԵՆՆԱ, 5 փետրվարի։ Անդրաշին յայտնեց, որ զինուորական գլխաւոր հարցերի վերաբերմամբ կարելի չեղաւ համաձայնեցնել դիմադրական կուսակցութիւնը կայսրի տեսակէտի հետ և որ ունգարական ճգնաժամից առաջացած դժուարութիւնները շարունակվում են։

ԼՕՆԴՕՆ, 5 փետրվարի։ (Սեփ. թղթ.)։ Լորդ Էլգինբօրօ պարլամենտը մտցրեց առաջարկութիւն՝ զինուորական և ծովային պաշտպանութիւնը կազմ ու պատրաստ ունենալ առաջնակարգ պետութեան կողմից յանկարծակի յարձակման դէպքի համար։

ԲՈՒԴՈՒՐՈՒՍԼԱՆ, 5 փետրվարի։ Գնացքի խորտակման հետևանքն էր 4-ի մոտ 27 վիրաւոր զինուորներ, որոնցից 8 ծանր։ Ճանապարհը վերականգնված է։

ՎԼԱԴԻՎՈՍՏՈԿ, 6 փետրվարի։ (Սեփ. թղթակցից)։ Վերջին ժամանակները յաճախակի հրդեհներ են։ Զօրամասերը շատ լաւ են աշխատում և աչքի են ընկնում իրանց բարեկարգութեամբ։ Ի նկատի ունենալով մի քանի գիմնազիաների նիւթական ծանր դրութիւնը, որ կապ ունի գիմնազիան Ներչինսկ փոխադրելու հետ, միջոցներ են որոնվում բարձր դասարաններ բանալու համար տեղական պրոգիմնազիայում։ Արտիստ Դալսկին օգնութեան եկաւ այդ գործում, տալով բարեգործական ներկայացում։ Ներկայացումը տուեց հազար ռուբլի արդիւնք։

ԼՕՆԴՕՆ, 5 փետրվարի։ (Սեփ. թղթակցից)։ Հաստատվում է, որ լորդ Միլնէր շուտով կը փոխարինվի լորդ Բալֆուրով հարաւային Աֆրիկայում, և դա մեծ զիջումն է համարվում դիմադրութեանը, որ վերագրվում է բարձր նախաձեռնութեանը։ Բարձրագոյն մանիֆէստը խորը տպաւորութիւն գործեց և անթիւ յօդուածների մէջ պարզաբանվում է։ Կարծիք է տիրում, որ հակառակ սակաւաթիւ յոռետես նախազգուշութիւնների, ոչ մի չարամտութիւն ընդունակ չէ դադարեցնել վերանորոգչական նախագծումների հաստատումն ընթացքը։ Լրագիրները մատնացոյց են անում, որ հասարակութեան թշնամիները զայրացած են ժողովրդական այն բռնկումից, որ արտայայտվեց Դահին մատնելու ձգտման մէջ։—Կայսրաւ միտինգ Մէրիլբօ անունով վիլլայում, որը կենդանութիւն տուեց իմպէրիալիզմի թառամած ոգեորութեանը։ Դուքս Ֆայֆ անգլիացիների ուրախութիւնը յայտնեց, որ նրանք արդէն ոչ թէ մի փոքրիկ կղզու քաղաքացիներ են, այլ

չը տեսնված չափերի համաշխարհային կայսրութեան։ Կայսրութիւնը պէտք է ամրացնվի յարաբերութիւններով, ընդհանուր առևտրով, և կազմակերպված փոխադարձ պաշտպանութեամբ։

ՏՈՒՆԻՍ, 5 փետրվարի։ Ռուսաց «Պրօնդիտէրի» և «Պրոզորլիվի» ականատեսները ճանապարհ ընկան դէպի հարաւ։

ՊԱՐԻԶ։ Մեծ Իշխանի մարմնի թաղման օրը ռուսաց եկեղեցում կը մատուցվի հոգեհանգստեան պատարագ, որին ներկայ կը լինեն Լուբէ, բոլոր մինիստրները և դիպլոմատիական մարմինը։ Սաքսէն-Կոբուրգ-Գոթայի մեծ դքսուհին Բէատրիսէ պրինցուհու հետ Լոնդոնից ճանապարհ ընկան Մոսկվա։—Մեծ Իշխանի սպանութիւնը զօրեղ տպաւորութիւն գործեց Վատիկանի վրա։ Պապը երկար հեռագիր ուղարկեց Թագաւոր Կայսրին ցաւակցութիւն յայտնելով։ Շատ կարդինալներ գընացին Վատիկանի ռուս դեսպանի մոտ և այցեստները թողին։

ՍՕՖԻԱ։ Մեծ իշխանի սպանութեան լուրը խոր տպաւորութիւն գործեց օֆիցէրների և ժողովրդի վրա։ Իշխանի հրամանով Բոլգարիայի գլխաւոր քաղաքներում հոգեհանգիստներ կը կատարվեն։ Բոլորը խորապէս յուզված են չարագործների դէմ, որոնք Ռուսաստանին դնում են զարհուրելի վիճակի մէջ, խանգարելով մեծ միսսիաների իրականացումը և թուլացնելով նրա ազդեցութիւնը միջազգային հարցերի վրա։ Իշխանը հրամայեց պալատում 10 օր սուգ պահել։ Զինուորական մինիստրը բանակում նշանակեց 6 օր սուգ։ Բոլգարական սինոդը հրամանագրեց հոգեհանգիստներ կատարել բոլոր մեծ քաղաքներում։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Իրբիտից, Պետրոզավոդսկից, Օդեսայից, Բեռլանից, Վլադիմիրից, Կրոնշտատից, Գանձակից և Կազանից հաղորդում են, որ հանգուցեալ Մեծ Իշխան Սերգիյ Ալէքսանդրովիչի համար հոգեհանգիստներ են կատարել։

ԿԱԶԱՆ։ Քաղաքի երկու լրագիրները նորից սկսեցին լոյս տեսնել։ Առևտրական և արդիւնաբերական ձեռնարկութիւնների 325 գործակատարներ, չը կամենալով դիմել ապօրինի միջոցների, «Волж. Лист.»-ի միջոցով դիմեցին և խնդրեցին տօն և կիրակի օրերն առևտուր չանել և կրճատել բանելու ժամերի թիւը։

ԹԷՕԴՕՍԻԱ։ Այսօր դումայի ձայնաւորները խորհրդակցում են, թէ ինչպէս պատուէն վերադարձող պօրտ-արտուրցիներին գեներալ Ստեսսէլի հետ միասին, եթէ նրանք թէոդոսիա գան։ Մինչև այժմ ոչ մի պաշտօնական լուր և կարգադրութիւն չը կայ։

ՄԵԼԻՏՈՊՕԼ։ Քաղաքային վարչութիւնը միջնորդում է, որ Դոնէց—չերնոմօրեան երկաթուղին անցկացվի Մելիտոպոլով և ոչ Բէյսէնֆէլդ-Սկադովսկով, որովհետև այլապէս Մելիտոպոլի առևտրա-տնտեսական նշանակութիւնը վերջնականապէս կընկնի։

6 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պաշտօնական։ Մինիստրների կոմիտէի 1904 թւի դեկտեմբերի 31-ի և 1905 թւի յունվարի 4-ի և 25-ի օրագրութիւններից քաղուածք՝ 1904 թւի դեկտեմբերի 12-ի Բարձրագոյն Անուանական ուկազի II կէտի գործադրութեան կարգի մասին։ Այս որոշումը Բարձրագոյն հաստատված է ներկայ փետրվարի 4-ին։ Կոմիտէը որոշել էր. 1) 1904 թւի դեկտեմբերի 12-ի Բարձրագոյն Անուանական ուկազի II կէտի տրամադրութիւնների մշակումը.—Տեղական բարեկարգութեան գործը պէտք է կատարել զէմստվոյական և քաղաքային հաստատութիւնների մասնակցութիւնով՝ ըստ պատկանելոյն։ 2) Այս խնդրի իրականացումը, նոյնպէս և զէմստվոյական և քաղաքային հիմնարկութիւնների նոր օրէնսդրութիւններ մշակելու գործը դնել երկու յատուկ խորհուրդների վրա, որոնք կազմվելու են Բարձրագոյն բարեհաճութեամբ նշանակված նախագահների ղեկավարութեամբ՝ հետևեալ անդամներից. 1) պատշաճաւոր վարչութիւնների գլխաւորներից նշանակված անձերից և II) զեմստվոների և քաղաքային հաստատութիւններից ընտրված անձերից։ 3) Յիշված խորհուրդների նախագահներին թոյլատրել, հարկը պահանջած ժամանակը, միացնել այդ երկու խորհուրդները մի ընդհանուր ժողովի. այդ խորհուրդներին առաջարկել իրանց քննութեանը ենթարկել ներքին գործերի մատակարարելիք նիւթերը նախագահների ասած ճանաբար առաջարկված հարցերի կարգովը և այդ խորհուրդներում մշակված զեմստվոյական և քաղաքային օրէնսդրութիւնների նախագծերը անմիջապէս յանձնել պետական խորհրդին, առանց յարաբերելու վարչութիւնների հետ։ 4) Զեմստվոներից և քաղաքային հիմնարկութիւններից յատուկ խորհուրդների համար ընտրութիւններ (II կէտ) անելու վերաբերութեամբ հետևեալ կարգը պահպանել. ա) այն նահանգներում, ուր ներմուծված են զեմստվոներ՝ ամեն մի նահանգից ընտրել 2 մարդ՝—որոնցից մէկն ընտրելու է նահանգական զեմստվոն իր կազմից, բացի նշանակովի անձերից, իսկ միւսն ընտրվում է այսպէս. նահանգի ամեն մի գաւառական զեմստվոն իր միջից ընտրում է, վերևում յիշված բացառութեամբ, մէկ-մէկ կանդիդատ, որոնք յետոյ իրանց միջից կընտրեն երկրորդ անդամին և այն քաղաքները ուր ներմուծված է քաղաքային ինքնավարութիւն 1892 թւի օրէնքներով, դրանց մէջ համարելով և Պետերբուրգը, և որոնց բնակիչների թիւը 1897 թւի յունվարի 28-ի ցուցակագրութեան համաձայն 50,000-ից աւելի է, նոյնպէս և համառոտված ինքնավարութեամբ կառավարվող 5 քաղաքները, որ մասնանշ կանէ խորհրդի նախագահը ներքին գործերի մինիստրի հետ համաձայնվելով, գուբերնիաների և քաղաքային լիազորների ժողովների կարգադրութիւններով իւրաքանչիւրն իր կազմից, բացի նշանակովի անձերից, ընտրել ամեն մի քաղաքից մէկ-մէկ մարդ։ 5) Ներքին գործերի մինիստրին թողնել (II կէտ) այդ խորհուրդներում քննելու համար նիւթերը (III կէտ, և ծրագրված օրէնսդրութիւնը հրատարակելու ժամանակ մտնել հետևեալ հարցի քննութեան մէջ. չէ՞ կարող արդեօք այդ օրէնսդրութիւնը գործադրվիլ և եթէ այո՝—ինչ չափերով արդեօք հիւսիս-արևմտեան և հարաւ-արևմտեան 9 նահանգների համար և այդ առիթով իր կարծիքները ներկայացնել պետական խորհրդի քննութեանը և 6) յանձնել երկրագործութեան մինիստրին առաջարկութիւն անել փոփոխութիւն մտցնել գիւղատնտեսական խորհուրդների մասին գոյութիւն ունեցող օրէնսդրութեան մէջ և այդ առաջարկները ներկայացնել ուղղակի պետական խորհրդին, առանց վարչութիւնների հետ յարաբերելու։

7 փետրվարի

ԲԵՐԼԻՆ։ Կայսրը պատրաստականութիւն յայտնեց ընդունելու Պէնսիլվանիայի համալսարանի իրաւաբանութեան դոկտորի կոչումը։—Հէնրիխ իշխանը ներկայ կը լինի Մեծ Իշխան Սերգէյ Ալէքսանդրովիչի թաղմանը։

ՎԼԱԴԻՎՈՍՏՈԿ, 6 փետրվարի։ Մայր եկեղեցում հոգեհանգիստ կատարվեց Մեծ Իշխան Սերգէյ Ալէքսանդրովիչի համար։

ՀԷԼՍԻՆԳՖՈՐՍ, 6 փետրվարի։ Ռուսաց լեզուի ձրի կուրսերում գրվեցին 299 հոգի։

ՄՕՍԿՎԱ, 6 փետրվարի։ Մեծ Իշխան Սերգէյ Ալէքսանդրովիչի դագաղի մոտ կատարվում էին անընդհատ հոգեհանգիստներ։ Մեծ Իշխանի վախճանված տեղը մետաղէ խաչ դրվեց։ Գիներալ-նահանգապետի տան վրա բարձրացրած է սուգի դրօշակ։

ԻՐԲԻՏ, 5 փետրվարի։ Կայացաւ տօնավաճառի կոմիտէի նիստը, որը Միապետին հասած դժբաղդ դիպուածի պատճառով յայտնեց Նրան հաւատարիմ հպատակութեան զգացմունքներ տօնավաճառում առևտուր անող վաճառականների կողմից։

ԲԵԼԳՐԱԴ, 6 փետրվարի։ Սերբիայի զանազան մասերում ազգաբնակութեան մէջ սով երևաց։

ՏՕԿԻՕ, 6 փետրվարի։ Պաշտօնական հեռագիրը հաղորդում է, որ ռուսները ոմբակոծում են եապօնական դիրքերի գիծը։ Փետրվարի 4-ին ռուսական հետևակների երկու խմբեր գրոհ տուին Լիուկուի վրա, բայց յետ մղվեցին։ Ռուսները շարունակում են ամեն տեղ ամրութիւններ կառուցանել։

7 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պաշտօնական։ Հեռաւոր Արևելքից փետրվարի 6-ին պաշտօնական տեղեկութիւններ չեն ստացված։—Բանաւորների դժգոհութեան պատճառները պարզելու համար հրատարակված են Բարձրագոյն հրամանագրի նախագահի սահմանած կանոնները արդիւնաբերութեան և բանաւորների ներկայացուցիչների ընտրութեան կարգի վերաբերութեամբ։ Ընտրութիւններին մասնակցելու իրաւունք տրվում է արդիւնաբերական հաստատութիւնների տէրերին, որոնք ունեն ոչ պակաս քան հարիւր բանաւոր։ Տէրերի ընդհանուր ժողովին իրաւունք է տրվում ընտրել իրանց միջից յանձնաժողովի կազմի համար 15 ներկայացուցիչներ, ըստ կարելւոյն արդիւնահանութեան իւրաքանչիւր խմբից։ Ընտրութիւններին մասնակցելու իրաւունք է տրվում ոչ պակաս քան հարիւր բանաւոր ունեցող բոլոր արդիւնագործական հաստատութիւնների երկու սեռի բանաւորներին։ Վարպետները, նրանց օգնականները, քարգանները և աշակերտները ընտրութիւններին իրաւունք չունեն մասնակցել։ Նախ և առաջ իւրաքանչիւր արդիւնագործական հաստատութեան բանաւորները ընտրում են ընտրողների իւրաքանչիւր հաստատութեան համար սահմանված թւով, որոնք ապա ընտրում են բանաւորների ներկայացուցիչներ յանձնաժողովում։ 100-ից մինչև 500 բանաւոր ունեցող արդիւնագործական հաստատութիւնների բանաւորները ընտրում են մէկ ընտրող. 500-ից աւելի և մինչև 1000 բանաւոր ունեցող հաստատութիւնները ընտրում են երկու ընտրող. 1000-ից աւելի բանաւոր ունեցող հաստատութիւնների բանաւորները մի-մի ընտրող են ընտրում իւրաքանչիւր 500 մարդու վրա։ Հէնց իրանց բանաւորների վրա է դրվում պատշաճաւոր կարգ պահպանելու պարտաւորութիւնը ընտրութիւնների ժամանակ։ Այդ նպատակով նրանց թոյլ է տրվում ընտրութիւնները ղեկավարելու համար իրանց միջից ընտրել մէկ կամ մի քանի նախագահներ։ Գործարանային և գոլ ծառայային ադմինիստրացիայի կազմին պատկանող անձինք ներկայ չեն լինում ընտրութիւնների ժամանակ։ Յանձնաժողովի նախագահը նրան հաւատացնում է, որ ոչ ոք յանձնաժողովում ընտրված բանաւորների ներկայացուցիչներից հալածանքի չի ենթարկվի գործնական դատողութիւնների մէջ պարզախօսութեան համար։

ՇԱՆԳՀԱՅ։ Ռուսական 15,000 հետևակը և 500 կազակներ 65 թնդանօթներով գտնվում են Սինմինտինի մոտ չէզոք հողի վրա։ Զինացինները խնդրեցին զօրքերի հեռանալը, բայց բոլորի վրա ուշադրութիւն չեն դարձնում։—Հաղորդում են, որ ռուսներն եկան հեռագրական գրասենեակը Մուկդէնում, յարբունիս գրաւեցին ապպարատը և դոկումէնտները և ձերբակալեցին հեռագրատան տասը պաշտօնեաներին։

ԼՕՆԴՕՆ։ Եապօնական աղբիւրներից ստացված տեղեկութիւնների համեմատ, սատկացրած ռուսական թնդանօթաձգութիւնը պաշտպանում է այն աստիճանաբար արշաւանքը, որ նպատակ ունի շրջապատել Կուրօկիի բանակը։ Այդ մանէօվրը պէտք է առաջացնէ մի չը լսված ընդհանուր պատերազմ հարիւր վերստ ճակատով։

ԼՕՆԴՕՆ։ Էդուարդ թագաւորը և Ուէլսի պրինցն ու պրինցուհին այցելեցին ռուսական դեսպանատունը և կոմսուհի Բէնկէնդորֆին։—Պետերբուրգի անգլիական դեսպանատան խորհրդական Սպրինգ Բայս ընդունվեց թագաւորից։

ԼՕՆԴՕՆ։ Մաքսային իմպէրիալիզմին նոր հարուած է հասցրված. ցեյլոնեան առևտրական պալատը միջնորդում է թէյի մաքսը պակասեցնել, որը արժէքից գցում է այդ ապրանքը։—Թագաւորը և Թագուհին այցելեցին Բատէնբէրգեան Լիւդվիգ պրինցի ամուսնուն նրա՝ Պետերբուրգ ուղևորվելուց առաջ։ Պալատում սուգ է նշանակված մի շաբաթ ժամանակով սկսած յունվարի 8-ից։

ՆԻՒ ԵՕՐԿ։ Եապօնական կառավարութիւնը պատուիրեց Ֆիլադէլֆիայում 150 շոգեկաթսայ 60 օրից յետոյ յանձնելու համար։

ՏՕԿԻՕ։ Կայացաւ գեներալ Մացուսարի հանդիսաւոր թաղումը. այդ գեներալը քաջութիւններ գործեց 203 մետր ունեցող բլուրը վերցնելու ժամանակ։ Թաղմանը ներկայ էին անգլիական և գերմանական դեսպանները։

ՊԱՐԻԶ։ Մամուլը, առաջ բերելով տեսակցութիւնը ռուս ծովագնաց օֆիցէրների հետ, որոնք վերադառնում են «Աւստրալիէն»-ով, հաստատում է անհամաձայնութեան գոյութիւնը ռուսաց գեներալների և ծովապետների մէջ Գօրտ-Արտուրում ի ՀՍաս գործի։—Վերջինների կարծիքով, Տոգօն Նելսօն չէ և իր ունեցած 40 ականանաւերով նա կարող էր պատճառել ռուսներին, որոնք ունէին միայն 15 ականանաւ, աւելի մեծ ՀՍաս։ Գօրտ-Արտուրը դիմացաւ այդքան երկար շնորհիւ նրան, որ ծովապետ Ուխտոմսկու հրամանով էսկադրան վերադարձաւ, այլապէս նա կընկնէր օգոստոսին։ Մեր ծովային անաջողութիւնների գլխաւոր պատճառները կայանում են նաւերի զանազան արագութեան մէջ և նրանց վրայից 100 թնդանօթ վերցնելը բերդի կարիքների համար։ Վերջում նաւերի վրա այլևս չը կային ականներ, որոնք գեներալ Կոնդրատենկոն վերցրեց ցամաքային ամրութիւնների համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գեներալ Կուրոպատկինի ամենահպատակային հեռագիրները Նորին Կայ-

սերական Մեծութեան անունով. 1) փետրվարի 5-ին. «Փետրվարի 3-ին հակառակորդը վանձեանպու գիւղից, կէս վերստ հեռու դէպի հարաւ-արևելք Չժանտանխօնանից, Խունխէ գետի վրա, Սանդէպուի դիմաց. ֆանզերի տանիքներից հարուածեց մեր խրամատները Չժանտանխօնանի մօտ։ Հրաձիգների հրացանային թունդ կրակից հապշտապ ցիները ստիպվեցան թողնել տանիքները։ Մեզանից վիրաւորվեցին կապիտան Իվանովը և շտաբս-կապիտան Օնիչնէվսկին։ Վերոյիշեալի մասին ամենահպատակօրէն զեկուցանում եմ Ձերդ Կայսերական Մեծութեան»։—2) Փետրվարի 6-ին. «Զօրախմբերի մէկի դէմ լեռնանցքում, Ցինխէնչէնից դէպի հարաւ-արևելք 15 վերստ հեռու, հապշտապցիները փետրվարի 6-ին հանեցին 4 թնդանօթ, որոնցից սկսեցին հարուածել մեր գրաւած լեռնանցքը։ Ցեռնագոյն զեկուցումներ չեն ստացված։ Վերոյիշեալի մասին ամենահպատակօրէն զեկուցանում եմ Ձերդ Կայսերական Մեծութեան։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

3 փետրվարի

Բօրսայի դիսկօնտը	$5^1/_4$—$6^3/_4$% »
Պետական 4% բենատն	$90^1/_4$ — »
I Խաղար. տոմսերը	395— — »
II » »	326— — »
III » »	26 $9^1/_2$ — »
Թիֆլիսի քաղաք. Կրեդիտ. Ընկ.	— — — »
Բագուի » » »	— — — »
Թիֆլիսի հող. բանկի 5% . . .	— — — »
» » » $4^1/_2$% . . .	— — — »
Բագուի նաւթ. Ընկ. . . .	407— — »
Կասպիական Ընկ.	5000— — »
Մանթաշեան և Ընկ.	230— — »
Նոբէլի և Ընկ.	10,000— — »

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԴՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

ԶԻՆՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի. ներքին և նեարդային
Մ. Դ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մորթու, վեներակ և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Գ. Ի. ԴԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Դ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1 $1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ՍԱԼՕԼՕՎ ատամնաբույժ. 9—11 ժ.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՁԵՐԲԻՆԻՆԱ—$1^1/_2$-2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—$7^1/_2$—8 ժ.
Գ. Ա. ԱՐԴԱՁԻԱՆԻ. Կատարում է միկրօ-քիմիական և բակտերիօգիական հետազօտութիւններ։
Օ. Ա. ԱՌՎԱՆԻՏԱԿԻ—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցում ընդունվում են և գիշերօթիկ հիւանդներ։
Հիւանդանոցի կառավարիչ՝ Բժ. Կ. Ի.

ԹԻՖԼԻՍԻ ԱՐԲՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ
Ձեռնարկութիւն Կայսերական Թատրոնների արտիստ Լ. Դ. Դօնսկոյի
Այսօր, երեքշաբթի, փետրվարի 8 ին, 15 դ գալա ներկայացում, մասնակցութեամբ տ.տ. Դօնսկոյ-Էյխէնվալդի, Դմիտրիեվոյ-Պոկասովսկայի, Տերսկոյի. պ. պ. Պոլուեանովայի, Գալեցկու, Դեմեանենկօի, Պոբուբինովսկու, Զալինսկու և Մուրատովի։
Կը ներկայացվի
«M-II ՆԻՏՈՒՇ»
կոմիք. օպերա 4 գործ., երաժ. Մասսէնէի։
Սկիզբն է երեկոյեան 8 ժամին։
Վաղը, չորեքշաբթի, փետրվարի 9-ին, բէնէֆիս Ե. Ա. Օրելի. մասնակցութեամբ Լ. Դ. Դօնսկոյի, կը ներկայացվի ՄԱՆՕՆ, օպ. 4 գործ. երաժ. Մասսէնէի։ Հինգշաբթի, փետրվարի 10-ին, վրաց դրամատիկական ընկ. ներկայացում. Շուտով կը կատարվի բենեֆիս Լ. Դ. Դօնսկոյի, ՄԵՖԻՍՏՕՖԵԼ, երաժ. Բօյտօի։
Տոմսակները ծախվում են։

Բժիշկ Ա. Միխիթարեանց
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մորթու և վեներական ախտ ունեցող հիւանդներ ամենայն օր, առաւօտ. 12—2. երեկոյեան 6—8
Մեծ Վանքի փողոց, տուն Կուզանօվի, դեղատան կից։ (տ. օ.) 10—80

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Երեքշաբթի, փետրվարի 8-ին, Թիֆլիսի ժողովարանի սիրողների խումբը անդամների, կանդիդատների և նրանց ընտանիքների համար կը ներկայացնէ
ԱՆՊԱՏԻՒ ՁԵՆ ԾՆՎՈՒՄ
դրամա 3 գործ. հեղ. Բօվետտի, թարգ. Ա. Մուրադբէգեանի։
Մասնակցում են՝ տ.տ. ***, Սօֆիա, օր.օր. Բուչուկուրի, Հախնազարեան, պ.պ. Տէր-Գրիգորեան, Վանչիր, Կաճկաճեան, Մակարեան, Ազեան, Տէր-Գրիգորեան Ш։
Տեղերի գները 1 բուբլ. մինչև 30 կօպ.
Սկիզբը ճիշդ ժամը $8^1/_2$-ին երեկոյեան։
Աշակերտներին մուտքը արգելվում է։
Բէժիսսօր՝ Գ. Միրզաղեան

Կիրակի, փետրվարի 13-ին, խմբի բեժիսսիօր Գ. Մերաղեանցի բենեֆիսի համար, կը խաղացվի առաջին անգամ հայոց բեմի վրա ՍԻԲԻՐԱԿԱՆ
Կօմ. 4 գործ. թարգմ. Գ. Մերաղեանի։

Տեղերի գինը 3 ր, մինչև 50 կ.
Մուտքը ազատ է ամենքի համար։

Լոյս տեսաւ
ԼԷՕ
ՌՈՒՍԱՀԱՅՈՑ
ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ
(ՍԿԶԲԻՑ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ)
Տպված է Վենետիկում։
Գինը 1 բուբլի 50 կօպէկ
Դիմել «Գուտտէնբէրգ» գրավաճառանոցին. книжный магазинъ «Гуттенбертъ». 6—10

ՇԵՐԱՄԻ ՍԵՐՄ
Ամենաբնութիւն տեսակներից, հեռեհալ առաջնակարգ ֆիրմաների՝ «Խ. Ս. Խրիսօդուլիսի» (Տաճկաստանից) և «Ֆ. Բէրբէ Եւ Ընկ.» (Ֆըրանսիայից), որոնք շատ տարիներից ի վեր Կովկասում փորձված և ճանաչված են. դրանցից վերջինը՝ բացի սպիտակ Բաղդադի տեսակից ունի նաև դեղին իտալականի տեսակից, բոլորն էլ մեծ խնամքով ՊԱՍՏԷՕՐԻ ուղղութեամբ պատրաստված և ձեռնտու գներով։
Ցանկացողներին՝ դիմել Թիֆլիս պ. Վ. Յակոբեանին, նախկին Արծրունի Գալերէյում՝ թիւ 127 դրասենեակը։ 4—5

Պահանջեցէք ամեն տեղ «ՕԴՕԲՐԻՆ»,
Միայն Միխաի։ Լեբեդեվի
«Этикетъ утвержденъ прав.» մակագրութիւնով։

Գլխաւոր պահեստատեղին դեղագործական ապրանքների վաճառման Կովկասեան ընկերութեան մէջ—Թիֆլիս, Բագու, Բաթում։
10, 20, 30 2—36

Հայ վաճառականներին
Տեղափոխվելով Կովկասից ՏՈՒՆ, ընդունում եմ կօմիսիօնէրական յանձնարարութիւններ—տեղական մանր (կուստառնի) և գործարանական արդիւնքներ գնելու (սամօվար, կէնքեր, պղնձեղէն երկաթեղէն, գարմօն, ճանապարհի համար հիւսված զամբ ղներ, աժուրնի կարասիք և այլն), նոյնպէս կովկասեան յատուկ ապրանքներ՝ վաճառելու այստեղ՝ ձեռնտու և մատչելի վարձատրութեամբ։ Պատուէրները կատարվելու են արագ և ճշդութեամբ։
Յարգանքով՝ Յ. Մուրադեանց
Հասցէս. Тула, Грязевская, д. Восковой, А. Мурадьянъ. 3—3

Երդուեալ հաւատարմատար
Ս. Ս. ՄԷԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆՑԻ
„Практическое Руководство“
для составленія бумагъ по дѣламъ Гражданскаго Судопроизводства въ ЗАКАВКАЗСКОМЪ КРАѢ, изд. 1904 года“.
Գինն է 1 բուբլի։
Վաճառվում է Թիֆլիսում. Կենտրոնական, Խիդդէկելի և Գուտտէնբէրգ գրավաճառանոցներում։ Հեղինակին դիմողներ՝ (Прис. повѣр. С. С. Меликъ-Адамову, Тифлисъ. Межевая ул., д. № 40) 10 օրինակից աւելի պահանջողները՝ ստանում են 20% զեղչ և ճանապարհածախս չեն վճարում։ Ե. շ. 24—30

Լոյս տեսաւ
ՀԱՅԿ ՏԷՐ-ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆԻ
ԲԱՌԱՐԱՆ
ՀԱՅ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՆՑ
(Հայագէոցեերով)
149 կենսագր. 45 պատկերով, պրակ առաջին
Միմիայն Ա. տարը
Գինն է 70 կ. ճանապարհածախսով 90 կ.
10 օրինակ գնողին 20% զիջում, 20 օրինակ—25%, 30 օրինակ—30%. կանխիկ ճանապարհածախսը գնողի վրա հաշուած։
Դիմել՝ Тифлисъ, Николаевская пл. № 3, Айку Теръ-Аствацатуряну և կամ Тифлисъ, Кавказская книжная торговля З. П. Григорянцу. 3—3

Մայկօպում հարկաւոր է եկեղեցական երգեցիկ քառաձայն խումբ կազմել գիտցող մի ուսուցիչ, որ բացի խումբ կազմելուց, պէտք է օրական 3—4 ժամ պարապէ ընտանիքներում երեխաների հետ հայոց լեզուից։
Մանրամասն պայմանների մասին դիմել Վահան քահ. Ասկարեանցին. Մայկօպ։ 4—8

Լոյս տեսաւ Գ. Ե.-ի
ՈՒՐՈՒԱԿԱՆՆԵՐԸ
ութը վէպիկներով. գինն է 25 կ.
Դիմել—Баку, Сурену Тарвердянцу. Меркурьевская ул. д. Туманянца. 4—4

Լոյս է տեսել և վաճառվում է
ԽԱՃԱԿ
«ՀԱՐԿԵՐԸ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ»
Գինն է 40 կօպէկ
Դիմել Թիֆլիս—«Գուտտենբէրգ» գրախանութը։ Առնուազը 5 հատ ցանկացողը կարող է դիմել հեղինակին, «Մշակ»-ի խմբագրութիւն։ (2. կ. է.)

Վաճառվում են
ԲԺ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆԻ
Երկու նոր աշխատութիւնները
I
ՄԷՐ ԵՒ ԽԱՆԴ (մի պատկերով) 20 կ.
II
ԱՆԱՌԱԿՈՒԹԻՒՆ և ՊՈՌՆԿՈՒԹԻՒՆ 20 »
Դիմել՝ Թիֆլիսում «Գուտտենբէրգ» և «Կենտրօնական» գրավաճառանոցները, իսկ Բագուում՝ «Сотрудникъ» գրավաճառանոցը։ 7—25

Մի ֆրանսիացի
որոնում է դասեր. հասկանում է գերմաներէն։ Գործնական և տեսական դասեր։ Ժ. դը Դիւշան։
Հասցէ—I քաղաքամաս, Վարդիսուբան փողոց, տուն Միլօվսկու, այրի տիկին Մ. Ժ. Գարանիա։ 3—3

ОТКРЫТА ПОДПИСКА
на ежедневную политическую, общественную и литературную газету
„НОВОЕ ОБОЗРѢНІЕ“
выходящую въ гор. Тифлисѣ подъ **новой редакціей** и по слѣдующей новой программѣ.
Новая редакція ставитъ себѣ цѣлью поддерживать традиціи и идеалы предшествовавшихъ редакцій, въ соотвѣтствіи съ новыми запросами нашего времени, столь богатаго событіями какъ во внѣшней, такъ и во внутренней жизни.
Подписная цѣна какъ для городскихъ, такъ и иногородныхъ подписчиковъ съ доставкой и пересылкой: на годъ—7 руб., на 1/2 года—4 руб., на 3 мѣсяца—2 р. 50 к. и на 1 мѣсяцъ—1 руб. За границу 14 руб. въ годъ.
Подписка съ 1-го и 15-го числа каждаго мѣсяца и объявленія принимаются въ конторѣ газеты [Барятинская ул., 8] и въ книжномъ магазинѣ Л. Б. Хиддекеля [на Головинском пр.], а также въ провинціальныхъ отдѣленіяхъ конторы газеты.
Плата за объявленія: для Кавказскаго края на 1-й страницѣ одинъ разъ—15 коп. [со строки петита], на 4-й страницѣ—8 коп. Повторныя объявленія пользуются скидкой.
Лицамъ, ищущимъ личныхъ занятій и труда, дѣлается скидка 50% противъ обычной таксы.
Подписывающіеся теперь же на весь 1905 годъ будутъ получать газету **безплатно въ ноябрѣ** мѣсяцѣ настоящиго года. 2—3

Պրոֆիզոր Ա. ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆՑԻ
ԲՕՐՕ-ՆԱՖԹԱԼԱՆ
Նոր նիւթը
Կատարելապէս ոչնչացնում է գլխի թեփը, ամրացնում է մազերը և օգնում մազերի բսնելուն. տալիս է մազերին իրանց բնական ու հաստատ տեսքը։ Թոյլատրված է բժշկական վարչութիւնից, իբրև ոչ մի ջնասակար նիւթ չը պարունակող։
Պահեստարան Кавказское Товар. торговл. аптек. товарами Въ Тифлисѣ, Баку, Батумѣ, վաճառվում է և Ռուսաստանի դեղատներում և դեղավաճառատներում։
Արժէքն է 1 բուբլի 25 կօպէկ։
(2. 1 ան.) 30—50

Կովկասեան Շրջանային Ինտենդական Վարչութիւնը
յայտարարում է, որ կալուածատէրերը, գիւղատնտեսական ընկերութիւնները, գիւղացիները, ինչպէս նաև կալուածների կապալառուները հրաւիրվում են մատակարարելու ինտենդական վարչութեան ցորեն, հաճար (միայն Հիւսիսային Կովկասում) ալիւր, ձիակորեկ, (гречневая крупа) ձաւար, կորեկ, կորկոտ, բրինձ և գարի, ժողոված սեփական կամ կապալով վերցրած կալուածներում, ոչ պակաս քան 100 պուդ իւրաքանչիւր անձից կամ ընկերութիւնից։ Ըստ ցանկութեան արդիւնաբերողների այս բերքերը պէտք է յանձնվեն ինտենդական վարչութեան կամ երկաթուղային կայարաններում կամ ինտենդական պահեստներում՝ համաձայն այն կանոնների, որոնք սահմանված են ուտեստի պաշարեղէն և անասունների ճարակ գնելու վերաբերմամբ Զինուորական վարչութեան կարիքների համար։ Վերոյիշեալ կանոնները կարելի է կարդալ Թիֆլիսի շրջանային ինտենդական վարչութեան մէջ կամ ինտենդական շտեմարանների վերակացուների մօտ։
Որ և է բերք մատակարարել ցանկացողը պարտաւոր է տալ կամ ուղարկել Շրջանային Ինտենդական Վարչութեան կամ մերձաւոր շտեմարանի վերակացուին գրաւոր յայտարարութիւն՝ երկու հատ 60 կօպէկանոց մարկաների հետ միասին։ Յայտարարութեան մէջ պէտք է որոշակի ցուցված լինեն։
Կալուածատիրոջ կոչումը, անունը, ազգանունը և հայրանունը.
Կալուածքի և գաւառի անունը, ինչպէս նաև հասցէն, որով պէտք է ուղարկվի պատասխանը.
Գնելու առաջարկված բերքի քանակութիւնը.
Բերքի յատկութիւնը (քաշը, թացութեան աստիճանը, աւելորդ կեղտի պարունակութեան տոկոսը).
Որքան արժէ առաջարկված բերքի պուդը.
Ո՞ր երկաթուղային կայարանում կամ ինտենդական ո՞ր շտեմարանում պէտք է յանձնվի բերքը.
Ո՞ւր պէտք է ուղարկվեն ինտենդական վարչութեան տոպրակները.
Բերքի յանձնելու ժամանակամիջոցը, ինչպէս նաև այն օրը, երբ պէտք է ուղարկված լինեն տոպրակները վարչութեան կողմից.
Ո՞ր տեղ և ո՞ւմ անունով պէտք է նշանակվեն յանձնված բերքի համար վճարների փողերը.
Այն դէպքում, երբ դժուարութիւններ ծագեն բերքի յատկութիւնը որոշելու մէջ կամ բերքը յանձնելու ուրիշ հանգամանքների վերաբերմամբ՝ կալուածատէրերը կարող են դիմել ինտենդական մերձաւոր շտեմարանի վերակացուին կամ ինտենդական այլ աստիճանաւորի՝ ծագման դժուարութիւնների մասին բացատրութիւններ խնդրելու։ 3—3

№ 4711 ՄԱԶԵՐԻ համար

ՆԵՐԿ

ԸՆԿՈՅԶԱ ԷՔՍՏՐԱԿՏԻՑ

տալիս է մազերին, լինեն նրանք սպիտակ թէ շէկ, կարճ ժամանակում ցանկալի գոյնը, սկսած բաց-շէկ գոյնից մինչև սևը և այդ պատճառով կարելի է վերականգնել նրանց կորցրած գոյնը։ Որքան յաճախ գործածվի այդ ներկը, այնքան աւելի մազերը գոյն կունենան № 4711 մազերի համար ներկը ընկոյզի էքստրակտից լիապէս արժանի է նախապատուութեան գոյութիւն ունեցող ներկերու բոլոր միջոցներից, որովհետև չի պարունակում ոչ մի վնասակար նիւթ։

ԳՈՅՆԵՐԸ.

սև, կինամոնի կամ դարչինի գոյնի, շէկ և բաց գոյնի։

Փոքր սրուակի գինն է 1 ր. 20 կ.
Մեծ » » 2 » — »

Ծախվում է բոլոր լաւագոյն վաճառատներում։

Ֆէրդ. Միւլգէնս

կեօլն (Ռէյնի վրա), բաժանմունքը Բիդայում։

Մատակարար Նորին Կայսերական Մեծութեան Արքունիքի։

№ 1537, 55/60 4—6
հ. 13, ն. 17, դ. 11, յվ. 12, ար. 2, 26.

Գուտտենբերգ

վաճառվում են հետևեալ գրքերը.

Պատմուածքներ Թիւրքահ. կեանքից, Վ. Փ. 1 ր.
Ժամանակը ոսկի է, Ս, Բամալեանցի, 40 կ.
Եսի-ժարդը, դրամա 5 արար. Շանթի, 60 կ.
Նոր կեանքի շէմքում, հրատ. Հ. Առաքել. 40 կ.
Պատկերներ Բաֆֆիի կեանքից, Աֆթանդ. 40 կ.
Պատկերներ, Ա. Ահարոնեանի, 1 ր.
Ռոբինզոն Կրուզո, Ս. Թառայեանցի, 1 ր. 25 կ.
Հաջի Բաբայի արկածները Պարսկաստանում, թարգմ. անգլ. Մկր. Կարապետեանի, 2 ր.
Հայոց նոր վկաները (գիտական հրատարակութիւն), Յ. Մանանդեանի և Հ. Աճառ., 3 ր.
Արուեստ առենախօսութեան, Մ. Գաբ. 1 ր. 50 կ.
Հարկերը Տաճկաստանում, Խաժակի, 40 կ.
Տեսութիւններ և նամակներ, Գ. Նիկող., 60 կ.
Պատմուածքներ, Չեխովից, թարգմ. Գ. Ար. 50 կ.
Ազատ. մասին, Միլլի, թ. ռուս. Ա. Կ. 1 ր. 20 կ.
Համով-հոտով, Գ. Ե. Սրուանձտեանի, 1 ր. 25 կ.
Անիի յիշատակ (նկարներ Անիի տեսար.), 1 ր.
Բառարան հայ կենսագրութեանց (հայագէտներով), Հայկ. Տէր-Աստուածատրեանի, 70 կ.
Տարեցոյց 1905 թ., Ն. Պապիկեանի, 60 կ.
Հարազատներ, վիպակ. Ատրպետի, 1 ր.

Գրախանութի ցուցակը ցանկացողներին ուղարկվում է ձրի։

Դիմել՝ Тифлисъ, книжный магазинъ «Гуттенбергъ», Г. Галустяну 2—2

Լոյս տեսաւ Պետերբուրգում

ԼԵՒՈՆ ԹԱՆՍԱՆԱՄԵԱՆԻ

Զաքարեա Զագելու օրերը

պատմական վէպ (849—889 թ.)

Գինն է 1 բուբլի.

Դիմել հեղինակին Հին-Նախիջևանում։ Շուտով կուղարկվի գրախանութներին՝ Թիֆլիսում Գուտտենբերգին և կենտրոնական գրավաճ., Երևանում «Արարատին»։ 4—10

Հարկաւոր է կարուձևի և ձեռագործի ցեղ ունեցող վարժուհի. պայմանների մասին դիմել Նուխի, Սոփիա Եկմալեանին. 2—3

Լոյս տեսաւ

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ

«ՊԱՏԿԵՐՆԵՐ»
«ՄԱՅՐԵՐԻ»

հետ մի գրքում։

Գինն է մի բուբլի։

Դիմել Թիֆլիսի գրավաճառներին և հեղինակին Тифлисъ редакція «Мурчъ». 9—10

Լոյս տեսաւ առանձին գրքով (սակաւաթիւ)

«Մուրճի» յաւելուած

ՋԷՄՍ ՄՕՐԻԷՐԻ

«ՀԱՋԻ ԲԱԲԱՆ»

թարգմ. անգլ. Մ. Կարապետեանի

(403+XVI մեծ. երես)

Գինն է 2 բուբլի

«Մուրճի» բաժանորդները ճանապարհածախս չեն վճարում։

Դիմել՝ Тифлисъ, редакція «Мурчъ» 6—10

Բացված է բաժանորդագրութիւն

Ե. ՓՐԱՆԳԵԱՆԻ

„ԱՏՐՊԱՏԱԿԱՆ“ պատկերազարդ ժողովածուի

«Ատրպատական» պարունակում է իր մէջ մի շարք յօդուածներ (ընդ. մօտ 30—35), որոնք զանազան ժամանակներում տպագրվել են պարբերական թերթերի մէջ, մեծագոյն մասը «Մուրճ» ամսագրում։ Կը լինեն նաև նոր զուլաններ, իսկ արտատպումները լոյս են տեսնելու նոր սրբագրութեամբ, ընդարձակ և ճոխացրած։ Գիրքը, որ տպագրվելու է Թիֆլիսում, ունենալու է 450—500 էջ, մօտ 50—60 տիպեր և տեսարաններ։

Բաժանորդագինն է Ռուսաստանում 1 ր. 50 կ. Պարսկաստանում 1 թուման, իսկ արտասահմանում 5 ֆրանկ. բաժանորդագինը կանխիկ է. լոյս տեսնելուց յետոյ գրքի գինը կարող է զգալի կերպով բարձրանալ։

Բաժանորդագրութիւնը ընդունվում է.

Ռուսաստանում. ա) Թիֆլիսում—«Հերմէս» տպարանում. բ) Բագուում—պ. Տիգրան Թաշաճեանի մօտ. գ) Երևանում—պ. Սարգիս Օհանջանեանի մօտ. դ) Ռոստով Դոնի վրա—պ. Զաքար Ռուստամեանի մօտ (Б. Садовая № 174). ե) Բաթում—պ. Սող. Յարութիւնեանի մօտ։

Պարսկաստանում. ա) Թեհրանում—պ. Յարէթ Խաչատրեանի մօտ (ուսուցիչ). բ) Թաւրիզում—պ.պ. Ա. Բաբայեանի և Յովսէփ Յովհաննիսեանի մօտ. գ) Սալմաստում—հեղինակի մօտ։

Արտասահմանում. ա) Եգիպտոսում—դոկտոր Կ. Փաշայեանի մօտ (Ալէքսանդրիա). բ) Ամերիկա—«Հայրենիքի խմբագրատանը (Boston). գ) Բոլգարիա—«Շարժումի» խմբագրատանը (Varna)։ 1—20

Ֆրանսիական Շոգենաւային Ընկերութիւն

«ՄԵՍՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ» — «MESSAGERIES MARITIMES».

14 27-ին փետրվարի 1905 թուի մեկնելու է Բաթումից, երեկոյեան ժամը 5-ին, «Crimée» շոգենաւը, հանդիպելով Տրապիզոն, Սամսոն, Կ. Պոլիս, Դարդանէլ, Զմիւռնիա, Պիրէյ, Մարսէյլ, Հավր և Լոնդոն։

Ուղղակի հաղորդակցութեան տոմսակները՝ մինչև Պարիզ, նոյնպէս և մինչև Շանղհայ (Զինաստանում), կարելի է ստանալ Թիֆլիսում պակասեցրած գներով։

Ապրանքների և ճանապարհորդների մասին՝ հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել ընկերութեանս Թիֆլիսի գործակալ պ. Վ. Յակոբեանին, նախկին Արծրունու գալերէյում, թիւ 127 դրասենեակը, հեռախօս՝ թիւ 608։ Դրասենեակը բաց է 9—1 ժամը ցերեկվայ և 5—7-ը երեկոյեան, բացի կիրակի օրերից։ 1—1

ԴԷՊՕ

ԱՌԱՋԻՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„Եղբ. Յակոբջանեանցներ եւ Սարգսեանց“

Պատրաստի հագուստեղէնի խանութում (Մելքայէլեան կամուրջ, Քամոյեանի տուն № 25—30) մշտական ստացվում են մեծ քանակութեամբ կանանց, տղամարդկանց և երեխաների համար ամենավերջին տարազով պատրաստած հագուստներ։

Գները չափաւոր են և առանց սակարգութեան։ (ա. օ.) 13—100

ԱՏԱՄՆԱԲՈՑԺ

Ս. Ա. Ստեփանեան

Ընդունում է առաւօտեան 9—2 և 5—7, Վեր-լեամինսկայա փ. № 8.

ա. օ.

ԲԺԻՇԿ Ս. Զ. ՄԻՐԶՈՅԵԱՆ

ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւն ամեն օր, ժ. 2—3 և 5—7 երեկոյեան, իսկ տօն օրերին առաւօտեան ժամը 10—11. Սօլոլակի փող. № 6.

(ա. օ.) 44—50

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

«ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆ և ԸՆԿ.»

Նոր լոյս տեսան

Հէֆիաթներ ասխարհ

պատկերազարդ սերիա

№ 1. Ղ. Աղայեանի. Դիւզնազ տատի հէքիաթը, Այծատատ, Զանգի-Զրանգի, Մանուկ-խան։

№ 2. Ղ. Աղայեանի. Եղեգնուհի, Անտառի մանուկը, Ասլան-Բալա։

Գրքոյկը 15 կօպէկ.

Հայ բանաստեղծներ

սերիա

1. Թումանեան Յովհ. Սասունցի Դաւիթը 15 կ.
2. » » Անուշ . . 15 »
3. » » Լեգենդներ . . 15 »
4. Շանթ Երգեր . . 15 »
5. » Լեռան աղջիկը . 15 »

Ժողովրդական գրոյկներ

1. Դեմիրչեան Դ. Ուխտաւորներ և Աշուղի հէքիաթը. գ. 7 կօպ.

Դիմել գրավաճառներին և Թիֆլիս, Т-во «Ст. Лисицянъ и К.» 5—5

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ

ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւն ամեն օր.

Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7

Վելիամինօվսկայա փողոց № 8։ (ե.ո.) 65—100

Ծախվում են

ամենաընտիր տեսակների պտղատու պատուաստված ծառեր 1—3 տարեկան հասակի, Աֆրիկեանի պտղաբուծական այգուց Լագոդեխում։ Նոյն այգում հիմված է ընդարձակ ցանած ծառատունկերի տնտեսութիւն (дичковое хозяйство) մեր սեփական ժողովված սերմերից Զաքաթալի անտառներում։

Դիմել Թիֆլիս, Մէլիք-Բախտամեանցի խանութ, Պուշկ. փող. իսկ Գորի, Կ. Աֆրիկեանին։ Պատկերազարդ ծառայուցակներն ուղարկվում են ձրի։ (շ. ե. հ.) 2—12

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Ա. ՀԱԽՎԷՐԴԵԱՆ

Մասնագէտ միզային և սիֆիլիտիքական հիւանդութիւնների,—ընդունում է հիւանդներին առաւօտեան 12 ժ.—1 ժ. երեկոյեան՝ 6 ժ.—9 ժ.։ Կուկիա, Սեմեոնովսկայա փ. № 20. (ո, կ. ե.) 4—30

ՄԱՍՍԱԼԻՏՈՒՄ

Ս. Պետերբուրգում, Գրեչեսկայա, Տաղկինում և Վասիլեոստրովում, Իրկուտսկում, Տաղանրոգում, Օդեսսում, Ռիգայում, Հարբինում, Ս. Փետերբուրգում, Ս. Ամերիկայում, Բոստոնում, Ֆիլադելֆիայում, Նիւ-Յորքում, Սան-Ֆրանսիսկոյում, Եկատերինոդարում, Ռոստովում (Դոնի վրա), Թիֆլիսում, Բաքվում, Ռիգայում, Ռևելում, Ֆելլինում, Դորպատ